

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« ԼԵՎ - ՇԻՆ »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆԻ ԲԱԶԱԼՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025-2028ԹԹ.
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝

Կ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	7
2. ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ	12
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	12
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
4.1. Նախատեսվող գործունեության վայրը	12
4.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը	15
4.3. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն	29
4.4. Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ	31
4.5. Կլիմայական պայմաններ	31
4.6. Մթնոլորտային օդ	39
4.7. Ջրային ռեսուրսներ	39
4.8. Հողային ծածկույթ	42
4.9. Կենսաբազմազանություն	44
4.10. Անտառային ռեսուրսներ	49
4.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	52
4.12. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ	55
4.13. Ազդակիր համայնքը	56
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ	64
6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ	70
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ	72
8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	78
9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ	80
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	83
11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	85
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	87
Հավելված 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական	88
Հավելված 2. Հողային նմուշի ֆիզիկաքիմիական փորձարկման արդյունքները ...	90

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման, հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար.

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Նախագծային փաստաթուղթ՝ նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ և դրանց փոփոխություն: Նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով կամ այլ իրավական ակտերով փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ նախատեսված չլինելու դեպքում՝ նախատեսվող գործունեության փուլային նկարագիր, ընդերքօգտագործման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 36-րդ և 39-րդ հոդվածներով սահմանված ծրագիր կամ 50-րդ հոդվածով սահմանված արդյունահանման նախագիծ.

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին բաղադրիչների (մթնոլորտային օդ, կլիմա, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ բնապահպանական հողեր, բնակավայրերի կանաչ գոտիներ, կառույցներ, բնական օբյեկտներ, պատմության և

մշակույթի հուշարձաններ), սոցիալական միջավայրի, ներառյալ մարդու առողջության, անվտանգության.

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը.

Նախատեսվող գործունեություն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ նախաձեռնողի կողմից նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության գործընթաց.

Նախաձեռնող՝ հիմնադրությային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ.

Ազդակիր բնակավայր՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հնարավոր ազդեցության ենթակա բնակավայր (Երևան քաղաքի դեպքում՝ վարչական շրջան).

Ազդակիր համայնք՝ ազդակիր բնակավայր ներառող համայնք.

Շահագրգիռ անձ կամ հանրություն՝ հիմնադրությային գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

Բնապահպանական կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը, իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիտորինգի) ծրագիր՝ հիմնադրույթային փաստաթղթի դրույթների գործողության կամ նախատեսվող գործունեության՝ նախագծային փաստաթղթին համապատասխան իրականացման ընթացքում և դրանից հետո շրջակա միջավայրի վրա ներգործության դիտարկմանը, հետնախագծային վերլուծությանը, պետական փորձաքննական եզրակացության և Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարմանը կամ արտադրական հսկմանը (ինքնահսկմանը) ուղղված գործողությունների ամբողջություն.

Բույսերի կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին.

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված

հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով.

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդ. 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որով կարգավորվում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է ՀՕ-110, 21.06.2014թ., խմբագրվել է 03.05.23 ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:
- «Թափոնների մասին» 24.11.2004թ.-ի թիվ ՀՕ-159-Ն օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

- ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի թիվ 1325-Ն որոշում, որով սահմանվել է հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն որոշում, սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների

վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:

– ՀՀ կառավարության 17.07.2017թ.-ի N990-Ն որոշում, որով սահմանվել են ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

– ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:

– ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակեղծհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա

ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

– ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ. N 369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:

– ՀՀ կառավարության 11.11.2021թ.-ի N 1848-Ն որոշում, որով հաստատել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը:

– ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N342-Ն հրաման, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:

– ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշումը, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

– ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N 1059-Ա որոշում, որով հաստատվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը (համաձայն N 1 հավելվածի) և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ (համաձայն N 2 հավելվածի):

2. ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ

Գործունեության նախաձեռնողը «Լեվ-Շին» ՍՊ ընկերությունն է: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ընկերության գրանցման համարն է 70.110.1026685, գրանցման ամսաթիվը՝ 06.07.2018թ., գտնվելու վայրը՝ Հայաստան, ԿՈՏԱՅՔ, ԱՐԶՆԻ, ՆՈՐ ՀԱՃՆ -ԱԲՈՎՅԱՆ ԽՃՈՒՂԻ 4, 2212:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ


«Լեվ-Շին» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի երկրաբանական ուսումնասիրություն, ինչը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Նախատեսվող գործունեության վայրը


ՀՀ Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքում նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Չարենցավան խոշորացված համայնքի Ֆանտան բնակավայրի սահմաններում:

Հայցվող տեղամասը գտնվում է Ֆանտան բնակավայրի բնակելի շինություններից մոտ 2.1կմ հեռավորության վրա: Չարենցավան քաղաքի շինություններ գտնվում է հայցվող տարածքից մոտ 4.6կմ հեռավորության վրա: Երևան-Սևան-Իջևան-Աղբեջանի սահման Մ-4 միջպետական նշանակության ավտոճանապարհը անցնում է Հարավային տեղամասից մոտ 4.7կմ, իսկ Մ4 - Ջրաբեր-Հրազդան -Հրազդանի քրեակատարողական հիմնարկ Հ-1 հանրապետական նշանակության ավտոճանապարհը՝ մոտ 3.6կմ հեռավորությունների վրա: Մոտ 5.9կմ հեռավորության վրա է գտնվում Հարավկովկասյան երկաթուղու Երևան-Սևան (Վարդենիս) երկաթուղային գիծը, մոտ 5.8կմ հեռավորության վրա՝ Արգել ՀԷԿ-ի դերիվացիոն ջրանցքը: Տարածքի իրադրային հատակագծերը ներկայացված են նկարներ 1-2-ում:



◆ Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամաս

Նկար 1.



Նկար 2.

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր՝ արոտավայրեր: Հայցվող տարածքը սահմանափակող եզրային կոորդինատները (ըստ ArmWGS-84 համակարգի) ներկայացվում են ստորև, աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Կետի հերթական համարը	Կոորդինատները	
	X	Y
1.	4471184.6374	8475192.0310
2.	4471549.2414	8475114.3965
3.	4471576.5817	8475277.3928

Կետի հերթական համարը	Կոորդինատները	
	X	Y
4.	4471565.4198	8475524.5683
5.	4471482.1977	8475612.1882
6.	4471204.6374	8475512.0310

Հարավային տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են. 40°22'31.98" հյուսիսային լանության և 44°42'36.83" արևելյան երկայնության: Հարավային տեղամասի տարածքը տեղակայված է 1920-1990մ բացարձակ բարձրությունների վրա:

Բազալտի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տեղամասի տարածքը ներկայացված է համայնքային սեփականության գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով: 07-067-0123-0020 կադաստրային ծածկագրով հողատարածքը 5 տարի ժամկետով վարձակալված է «Լեվ-Շին» ՍՊ ընկերության կողմից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը ներկայացվում է հավելված 1-ում):

4.2 Նախատեսվող գործունեության բնութագիր

Երկրաբանական կառուցվածքը

Ֆանտանի հանքավայրի Հարավային տեղամասի տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են մասնակցում են գերազանցապես պալեոգեն-նեոգենի հրաբխածին-նստվածքային և նստվածքային, նեոգեն-չորրորդականի հրաբխային ու ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները (նկար 3): Հանքավայրի շրջանի արևմտյան հատվածում՝ Աղվերան և Բջնի գետերի ավազաններում մերկանում են վերին պրոտերոզոյ-քեմբրիի ժամանակաշրջանի Ծաղկունյաց զանգվածի փոխակերպային ապարները, որոնք բաժանվում են ստորին (արզականի) գնեյսա-բյուրեղային և վերին (բջնիի) կանաչ-թերթաքարային սերիաների:

Նշված սերիաների կազմում առանձնացվում է թվով 4 շերտախմբեր՝ Արգականի, Բջնիի, Ձորագլխի, Աղվերանի:

Վերին կավձի կոնյակի հարկի նստվածքները (կոնգլոմերատներ, փայլարային ավազաքարեր, կրաքարեր, ավազաքարային կավեր, մերգելներ և մերգելային ավազաքարեր) երիզում են վերին պրոտերոզոյ-ստորին քեմբրի թերթաքարային հիմքի ելուստները, տեղադրվելով դրանց վրա ազիմուտային և անկյունային աններդաշնակություններով: Դալար գետի վերին հոսանքում այս նստվածքների ամբողջական կտրվածքի հզորությունը հասնում է 356մ-ի:

Վերին կավձի սանտոն-մաստրիխտ հարկի առաջացումները ներկայացված են կրաքարամերգելային և տերիգեն ֆորմացիաներով՝ կրաքարեր, կրային ալևրոլիտներ, կավային կրաքարեր, ավազաքարային կրաքարեր: Ծաղկունյաց կամարածալքում այս ստորաբաժանման ապարների առավելագույն հզորությունը հասնում է 300-600մ-ի:

Պալեոցենյան նստվածքները ձգվում են Հրազդան գետի աջ ափին, ձգվում են Քաղսի գյուղից հյուսիսային ուղղությամբ՝ գետի հոսանքին զուգահեռ: Ներկայացված են ավազաքարային կրաքարերով և կրաքարերով: Կազմում են ոչ մեծ, նեղ կամարածալքի միջուկը, որի թևերը անկում են 25-35° անկյան տակ դեպի արևելք և 5-10° անկյան տակ դեպի արևմուտք:

Ստորին էոցենի ստվարաշերտի կրաքարերը, մերգելները, կրաքարային ավազաքարերը, կրաքարային գրավելիտները և գրավելիտային կրաքարերը Քաղսի գյուղից հյուսիս տեղադրված են պալեոցենի նստվածքների վրա, իսկ մնացած տարածքում առանց անկյունային աններդաշնակության պարզ արտահայտված հետքերի տեղադրված են վերին սենոնի կրաքարա-մերգելային ստվարաշերտի լվացված մակերեսի վրա: Ստորին էոցենի ստվարաշերտն ամենուրեք ունի 235-240° անկման ազիմուտ և 40-50° անկման անյուն, հզորությունը կազմում է 140մ:

Միջին էոցենի ստվարաշերտը ներդաշնակ տեղադրված է ստորին էոցենի վրա և ներկայացված է տուֆածին ապարներով: Ստորն մասում այն կազմված է կոպճային տուֆերի նրբաշերտերից, կանաչա-մոխրագույն և երկնագույն-մոխրագույն մանրաշերտ ապակեբյուրեղա-բեկորային և պսամիտային տուֆերից: Վերին մասում ստվարաշերտը ներկայացված է երկնագույն-մոխրագույն տուֆափշրաքարերով: Ապարների հզորությունը հասնում է 500մ:

Վերին էոցենի ստվարաշերտի հզորությունը 400-450մ է, այն կազմված է ավազակավային նստվածքներից, որոնք հաճախ պարունակում են մանր- և խոշոր ֆորամինիֆերների ֆաունա:

Ստորին օլիգոցենի առաջացումները ըստ քարաքանական կազմի մոտ են վերին էոցենի ապարներին: Այս շերտախմբի կառուցվածքում հիմնական դերը պատկանում է ավազաքարերին, կավերին, առանցքային տեղ են զբաղեցնում ալևրոլիտները, օրգանածին կրաքարերը, կոնգլոմերատները: Ստվարաշերտի հզորությունը տատանվում է 81-ից 600մ սահմաններում: Ապարների ստորին օլիգոցենյան հասակը հաստատված է ֆորամինիֆերների ֆաունային հիման վրա:

Վերին օլիգոցեն-ստորին միոցենի հասակի հացավանի շերտախումբը ներկայացված է բացառապես տերիգեն նստվածքներով՝ կավերի, փխրուն կոնգլոմերատների և ավազաքարերի դարսաշերտերով, որոնց հզորությունը տատանվում է մի քանի մետրից մինչև 30-40մ միջակայքում:

Միջին միոցենին են վերագրվում գիպսա-աղաբեր նստվածքների ջրվեժի շերտախումբը, որի ընդհանրական հզորությունը հասնում է 600-700մ-ի:

Միջին-վերին միոցենի (կոնկ-սարմատի) հրազդանի շերտախմբի նստվածքները կտրվածքով դեպի վեր փոխարինում են գիպսաաղաբեր ստվարաշերտին և հիմնականում ներկայացված են կանաչա-դեղնավուն կավերով, որոնց ենթարկվում են բաց-մոխրագույն, թույլ ցեմենտացված ավազաքարերի, կավային և այրվող թերթաքարերի, կեղծ-օոլիտային կրաքարերի և խեցեքարերի փոքր հզորության շերտերը: Հրազդանի շերտախմբի տերիգեն հաստվածքի առավելագույն հզորությունը կազմում է 400-450մ:

Ստորին պլիոցենը ներկայացված է հատիսի շերտախմբի էքստրուզիվ-էֆուզիվ առաջացումներով, որոնք լայն տարածված են Հրազդան գետի ձախ ափին և կազմում են Հատիս և Գութանասար լեռների զանգվածները: Շերտախմբի կազմում մասնակցում են տևախիդացիտներ, տրախիլիպարիտներ, պեռլիտներ, օբսիդիաններ: Ապարների առավելագույն հզորությունը կազմում է 500-650մ:

Ստորին պլիոցենին (վերին մաս) են վերաբերվում Կոտայք-Եղվարդի սարավանդի անդեզիտները, անդեզիտաբազալտները, բազալտները, ստորին ծաղկունյացի ենթաշերտախմբի թթու հրաբխա-բեկորային ապարները (պեռլիտներ, օբսիդիաններ,

դացիտներ, լիպարիտներ, անդեզիտներ), վերին ծաղկունյացի ենթաշերտախմբի անդեզիտները, քվարցային անդեզիտները և դացիտներ:

Վերին պլիոցենը ներկայացված է փոքր ամփարտակային լճերի նստվածքներով՝ դիատոմիտներով (հզորությունը հասնում է 12-16մ) և դոլերիտային բազալտների հոսքերով (հզորությունը մինչև 10-15մ):

Ստորին չորրորդական հասակը դիտարկվող շրջանում ներկայացված է ավազակավերով, պեմզային նստվածքներով (առավելագույն հզորությունը 20մ):

Միջին նեոպլեյստոցենի հասակին են վերագրվում Գառնի գյուղի շրջանում տարածված անդեզիտաբազալտային հոսքերը, որոնց հզորությունը չի գերազանցում 20 մետրը:

Միջին չորրորդական առաջացումների կտրվածքում մերկանում են երևան-լենինականյան տիպի հրաբխային տուֆերը: Տուֆերի առաջնային տեղադրվածությունը հորիզոնական է, աղային տեկտոնիկայի զարգացման տարածքներում դրանք ձեռք են բերում թեք տեղադրում:

Միջին-վերին նեոպլեյստոցենը ներկայացված է հետմագմատիկ փուլի հանքային աղբյուրների գործունեության արդյունքում ձևավորված տրավերտիններով:

Վերին պլեյստոցենի հասակին են դասված Հրազդան գետի ստորին դարավանդի լճագետային նստվածքները, ամենամեծ հզորությունը կազմում է 12մ:

Վերին չորրորդական լավաները զբաղեցնում են նկարագրվող շրջանի տարածքի մեկ երրորդը՝ մինչև Գեղամա լեռնաշղթայի անջրպետային կատարը: Ներկայացված քարտեզի սահմաններում քարտեզագրվել են Հրազդանի, Օխտաղբյուրի և Սևսարի լավային շերտախմբերը:

Հոլոցենի նստվածքները ունեն բավականին լայն տարածում և ներկայացված են հեղեղաբերուկային, գետաբերուկա-հեղեղաբերուկային և գետաբերուկային նստվածքներով:

Ինտրուզիվ առաջացումներից հայտի են վերին պրոտերոզոյան գրանիտա-գնեյսերը, գրանիտ-միգմատիտները և լեյկոկրատային գրանիտները, որոնք կազմում են Բջնիի ինտրուզիվ մարմինը (8կմ² մակերեսով):

Դալար գետի միջին հոսանքի հովտում մերկանում են վաղ պալեոզոյան հասակի գաբբրոների ոչ մեծ մարմիններ:

Ստորին պլիոցենին վերագրվող լիպարիտների ինտրուզիվ մարմինները Ավան և Գյումուշ գյուղերի մոտ առաջացնում են երկու ոչ մեծ գմբեթներ:

Ըստ Հայաստանի տեկտոնական շրջանացման սխեմայի (Ա.Գաբրիելյան և ուրիշներ, 1981թ.) դիտարկվող շրջանը տեղադրված է երեք կառուցվածքային-ֆորմացիոն զոնաների սահմաններում: Շրջանի հյուսիս-արևմտյան մասը մտնում է Հանքավան-Սյունիքի գոտի, հարավ-արևելյան մասը պատկանում է Երևան-Օրդուբադի գոտուն, իսկ դրանց միջև տեղադրված տարածքը՝ Երևանի ճկվածքին:

Հարավային տեղամասի տարածքը հարում է վերին չորրորդական ժամանակաշրջանի Սևսարի լավային շերտախմբին, որը ներկայացված է մինչև 120մ հզորություն ունեցող բազալտների, անդեզիտաբազալտների լավային հոսքերով:

Ըստ Գ.Հակոբյանի (1954-1960թթ.) տվյալների՝ Սևսարի լավային հոսքերն ունեն բազալտային, անդեզիտաբազալտային, ավելի հազվադեպ՝ անդեզիտային կազմ: Արտաքնապես ապարները ծակոտկեն հոծ ապարներ են: Բազալտային տարատեսակներին բնորոշ է մուգ-մոխրագույնից մինչև սև գույն, անդեզիտաբազալտային տարատեսակները մոխրագույնից մուգ-մոխրագույն են, անդեզիտային տարատեսակները՝ մոխրագույնից բաց-մոխրագույն:

Մանրադիտակի տակ ապարները միկրոպորֆիրային են, հիմնական զանգվածը՝ պլիոտաքսիտային: Երբեմն հանդիպում են պորֆիրային ստրուկտուրա և հիմնական զանգվածի միկրոդեկորիտային կառուցվածք ունեցող տարատեսակներ: Տեքստուրան ծակոտկեն է, ծակոտիները կազմում են ապարի զանգվածի մոտ 12%-ը: Հիմնական զանգվածը բաղկացած է պլագիոկլազի կոդմնորոշված մանր միկրոլիտներից, օլիվինի և պիրոքսենի անկանոն ցրված հատիկներից, որոնք կապակցվում են կիսաքայքայված, խարամացված հրաբխային ապակիով:

Պորֆիրային ներփակումները ներկայացված են պլագիոկլազով և օլիվինով: Պլագիոկլազը (անդեզին-լաբրադոր) հանդես է գալիս 0.4մմ չափերի աղյուսաձև և լեյստանման հատիկների տեսքով, իսկ օլիվինը կլորավուն է, հաճախ տձև, չափերը՝ 0.3-0.5մմ:

Բազալտները մանրադիտակի տակ ունեն միկրոպորֆիրային կառուցվածք, հիմնական զանգվածը միկրոլիտային է, երբեմն պլիոտաքսիտային և հիալոպլիտային: Տեքստուրան ծակոտկեն է, ծակոտիները կազմում են ապարի զանգվածի մոտ 20%-ը,

երբեմն հասնելով 40-45%: Հիմնական զանգվածը ներկայացված է կիսաքայքայված, խարամացված հրաբխային ապակիով, որում ընկղմված են պլագիոկլազին (լաբրադոր), օլիվինի և պիրոքսենի (հիպերստեն) հատիկներ: Հիմնական զանգվածը գերակշռում է, կազմելով մոտ 70%: Հանքային միներալը՝ մագնետիտ:

Անդեզիտները մանրադիտակի տակ ունեն պորֆիրային կառուցվածք, հիմնական զանգվածին բնորոշ է միկրոլիտային ստրուկտուրա: Հիմնական զանգվածը կազմված է պլագիոկլազի մանր միկրոլիտներից, որոնք ցեմենտացված են պելիտիզացված հրաբխային ապակու աննշան քանակությամբ: Ներփակումները ներկայացված են պլագիոկլազով (անդեզին) և ամֆիբոլով:

Հիմնական զանգվածի և ներփակումների ծավալները գրեթե հավասար են: Հանքային միներալը՝ մագնետիտ:

Դաշտային նախնական դիտարկումների տվյալներով հայցվող տեղամասի բազալտները ներկայացված են միջին-խոշոր ծակոտկեն ապարատեսակներով: Բազալտներն ունեն մոխրագույն և բաց մոխրագույն գունավորում, խիտ են, զանգվածեղ: Մերձմակերևութային, մերկացող հատվածքներում ապարը ճեղքավորված է:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի մի մասը ծածկված է քարաթափերով, որոնք ներկայացված են մայրական ապարի (բազալտ, անդեզիտաբազալտ) տարաչափ բեկորներով:

Բազալտների մակերևույթը ծածկված է մոտ 0.2-0.8մ հզորությամբ ուժեղ քարքարոտ, բազալտի տարաչափ բեկորներ պարունակող սևահողերով (միջինը՝ 0.5մ):

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանի հավելված 2-ի հրահանգի աղյուսակ 1-ի հայցվող Ֆանտանի բազալտի հանքավայրի հարավային տեղամասը վերագրվում են 1բ խմբին՝ հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մեթոդաբանությունը

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ըստ «Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы» և «Շինարարական և

երեսապատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման» հրահանգների հանձնարարականների:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, սյունակային հորատման, փորձնական բացահանքի անցման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով: Ուսումնասիրվելու են նաև տեղամասի մակերևույթին տարածված քարաբեկորների քիմիական, պետրոգրաֆիական և ֆիզիմեխանիկական հատկությունները:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանի հավելված 2-ի հրահանգի աղյուսակ 1-ի հայցվող տեղամասը վերագրվում են 1բ խմբին՝ հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված:

Այս խմբի հանքավայրերի համար նախատեսված է հետախուզական ցանցի խտության վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև:

Հանքավայրերը			Փորվածքների միջև հեռավորությունները (մ)՝ պաշարների կարգերի ստորաբաժանման համար		
Խմբեր	Ենթախմբերը	Երկրաբանական կառուցվածքի հայտանիշները	A	B	C
1	1բ	Հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված	100-200	200-300	300-400

Հաշվի առնելով տեղանքի ռելիեֆի, օգտակար հանածոյի մարմնի տեղադրման պայմանները, ինչպես նաև տեղամասի հետագա շահագործման լեռնատեխնիկական պայմանները, հետախուզական հորատանցքերի միջև հեռավորությունը կազմել է 134-294մ, ինչը թույլ կտա հետախուզված պաշարները գնահատել A և B արդյունաբերական կարգերով:

Հետախուզման ստորին սահման է ընդունվում 1912մ հորիզոնը:

Նախապատրաստական շրջան, ծրագրի կազմում,

կազմակերպում և լուծարում

Մինչև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՈՍՏ-երին:

Կատարողների աշխատանքի

Նախագծի կազմում.

ծախսը կազմում է.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս	I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս
տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:	տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:
Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:	Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Կազմակերպում և լուծարում

Հանաձայն “Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы” հրահանգի պահանջների, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 1%-ը: Դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 0.8%:

Երկրաբանահանութային աշխատանքներ

Հայցվող տարածքի կոորդինատները որոշվել են տեղանքում սերտիֆիկացված GPS սարքի կիրառմամբ ըստ WGS-84 ARMREF 02 համակարգի՝ կատարելով նաև տեղորոշիչ կապակցում դաշտային պայմաններում:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է շուրջ 16.0հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանութային աշխատանքներ: Երևակման երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 3.6կմ:

Հորատման աշխատանքներ

Մեխանիկական սյունակային հորատում

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր

համաձուլվածքային թափիկներով՝ 112-96 մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել մինչև 68 մետր խորության 9 հորատանցքեր (328 մետր ընդհանուր խորությամբ), հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%: Հորատանցքերի խորությունները որոշելիս հաշվի են առնվել տեղամասին հարող Ֆանտանի հանքավայրերի երկրաբանական տվյալները: Հորատվող ապարները համապատասխանում են VII-րդ և VIII-րդ կարգերին: Հորատման ծավալների մոտավոր բաշխումը ըստ հորատելիության կարգերի ներկայացված է ստորև.

- հողաբուսական շերտ բազալտների տարաչափ բեկորներով -- VII կարգ – 4.0զծ.մ,
- թարմ բազալտներ – VIII կարգ – 324.0զծ.մ:

Հորատանցքերի համարը	Նախագծային խորությունը	Ապարների կարգը	
		IV	VIII
1	2	3	5
Հորատանցք 1	37մ	0.5մ	36.5մ
Հորատանցք 2	30մ	0.6մ	29.4մ
Հորատանցք 3	11մ	0.8մ	10.2մ
Հորատանցք 4	14մ	0.6մ	13.4մ
Հորատանցք 5	34մ	0.3մ	33.7մ
Հորատանցք 6	28մ	0.2մ	27.8մ
Հորատանցք 7	48մ	0.4մ	47.6մ
Հորատանցք 8	58մ	0.3մ	57.7մ
Հորատանցք 9	68մ	0.3մ	67.7մ
ԸՆԴԱՄԵՆԸ	328մ	4.0մ	324.0

Հորատող հաստոցի տեղակայում և տեղահանում

Նախատեսվում է 9 հետախուզական հորատանցքերի հորատում, ինչի նպատակով կատարվելու է հորատող հաստոցի 9 տեղակայում և տեղահանում:

Լեռնային փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների

- հորատահանուկի փաստագրում – 328զծ.մ
- փորձնական բացահանք - 30.0 զծ.մ:

Նմուշարկում

Օգտակար հանածոն նախատեսվում է ուսումնասիրել որպես երեսապատման նյութ և շինարարական խճի և ավազի արտադրման հումք:

Թարմ բազալտների ուսումնասիրության նպատակով նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և փորձնական բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատանցքերը նմուշարկել ընդհատվող տիրույթներով, հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը մինչև 5մ: Հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 65 նմուշ;
- կատարել փորձնական արդյունահանում բացահանքից – 150խ.մ թարմ բազալտներ:

Թարմ բազալտների քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 3 նմուշ, պետրոգրաֆիական կազմի ուսումնասիրման նպատակով՝ 3 նմուշ:

Տեղամասի մակերևույթին տարածված քարաբեկորների ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով վերցվելու է 2 համախառը նմուշ, յուրաքանչյուրը մոտ 50կգ քաշով: Քարաբեկորների քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ, պետրոգրաֆիական կազմի ուսումնասիրման նպատակով՝ 2 նմուշ:

Փորձնական բացահանքից բլոկների արդյունահանման ընթացքում առաջացած բազալտի ջարդոնից, կտորտանքից կազմվելու է 1 համախառն նմուշ մոտ 50կգ քաշով, որով նախատեսվում է ուսումնասիրել բլոկների արդյունահանման թափոնների պիտանելիությունը շինարարական խճի և ավազի ստացման համար:

Լաբորատոր հետազոտություններ

Օգտակար հանածոյի քիմիական կազմը կորոշվի ըստ 5 նմուշների անալիզի (3-ը թարմ բազալտներից, 2-ը՝ քարացրոններից): Քիմիական կազմի որոշումը կկատարվի ՀՀ ԳԱԱ ԵԳԻ քիմիական լաբորատորիայում:

Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 65 հորատահանուկային և 3 համախառը (2-ը՝ քարացրոններից, 1-ը՝ բլոկների արդյունահանման թափոններից): Լաբորատոր փորձարկումները կկատարվեն ՀՀ ՏԿԵՆ «Անալիտիկ» ՓԲԸ

լաբորատորիայում, որը համաձայն ՀՀ կառավարության 09.11.2006թ.-ի №1678-Ն որոշման հանդիսանում է ՀՀ տարածքում օգտակար հանածոների որակը գնահատելու նպատակով անալիզի ենթարկված շարքային նմուշների վերահսկիչ լաբորատորիա:

Քարաքանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 5 հոկտեմբերի միջոցով: Այս ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Պետրոլոգիայի և իգոտոպային երկրաբանության լաբորատորիայում:

Ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունները ուսումնասիրելու, ինչպես նաև հետագա արդյունահանման տեխնիկատնտեսական հաշվարկների համար ելակետային տվյալներ ստանալու նպատակով լաբորատոր հետազոտման կենթարկվի փորձական բացահանքից արդյունահանված քարաքանական նյութը, ինչի հիման վրա կորոշվի լեռնային զանգվածից բլոկների ելքը:

Դաշտային պայմաններում 2 տեղով կորոշվի նաև օգտակար հաստվածքը ծածկող ապարների ծավալային զանգվածը:

Փորձական հանույթ

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է տեղամասի սահմաններում փորձական բացահանքի անցում՝ $20 \times 3.0 \times 3.0 = 180 \text{մ}^3$ ծավալով, որից 30մ^3 բազալտի բեկորներով հողաբուսական շերտն է և 150մ^3 չհողմնահարված, թարմ բազալտներ: Վերջիններից կկատարվի փորձական հանույթ պիտանի բլոկների ելքի որոշման համար, իսկ բլոկների արդյունահանումից առաջացած ջարդոնը փորձարկվելու է որպես հումք շինարարական խճի և ավազի ստացման համար:

Փորձական արդյունահանման աշխատանքները կկատարվեն մեխանիկական հարատասեպային եղանակով, օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր:

Աշխատանքների ընթացքում կատարված ծախսերի և վերջնարտադրանքի քանակի մասին ստացված տվյալները հիմք կհանդիսանան Հարավային տեղամասի արդյունաբերական գնահատման կազմման համար:

Տոպո-մարկշեյդերական աշխատանքներ

Նախատեսվում է կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ դրոններով մոտ 16.0հա մակերեսով տարածքում՝ բոլոր հետախուզական փորվածքների, փորձական բացահանքի տեղադրմամբ տոպոհիմքի վրա, քարացրոնների մակերևույթի հարաբերական բարձրությունների ճշգրիտ արձարձմամբ:

Ինժեներներկրաբանական և հիդրոներկրաբանական
ուսումնասիրություններ

Երկրաբանահետախուզական և հիդրոներկրաբանական պայմանների
ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ
փորձնական հանույթի և հորատանցքերի անցման ընթացքում:

Նախատեսվում է տեղամասի հիդրոներկրաբանական պայմանների (գրունտային
ջրերի հորիզոնների առկայություն, խորություն, դեբիտ, քիմիական կազմ)
ուսումնասիրություն: Միաժամանակ, տեղամասը կազմող ապարների
ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության ժամանակ
առանձնահատուկ կարևորվում է տարածքը կազմող ապարների ճեղքավորվածության,
ծակոտկենության, ջրակլանելիության հետազոտությունները, ինչը թույլ կտա
պարզաբանել տեղամասի տարածքի հիդրոներկրաբանական կառուցվածքի
առանձնահատկությունները, գնահատել մթնոլորտային տեղումներից առաջացող հոսքի
ինֆիլտրացիան:

Ստացված տեղեկատվությունը հիմք կհանդիսանա հետագայում՝ շահագործման
նախագծի կազմման փուլում գնահատել տարածքի լանդշաֆտային փոփոխության
հնարավոր ազդեցությունը ջրային հաշվեկշռի բաղկացուցիչների վրա:

Օգտակար հանածոյի ռադիոմետրական ուսումնասիրություններ

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու
համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել
ռադիոմետրիական չափումներ հանքավայրի ամբողջ տարածքում ռադիոմետրիական
չափիչ սարքի միջոցով:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու
համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել
ռադիոմետրիական չափումներ չափաբերված СРП-68-01 գործիքի միջոցով՝
պայմանագրային հիմունքներով: Աշխատանքները կիրականացվեն հորատանցքերի
հանուկի, փորձնական բացահանքի մակերեսով:

Հաշվետվության կազմման աշխատանոցային աշխատանքներ

Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքում
երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լաբորատոր

ուսումնասիրությունների ավարտից հետո կկատարվեն աշխատանոցային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ տեղամասի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման դիտարկմանը:

Բեռների և ուղևորների փոխադրում

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների և ուղևորների փոխադրումը կկատարվի ասֆալտապատ և հողածածկ ճանապարհներով: Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10%-ի չափով:

Հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն

Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի ռելիեֆը, հորատման հարթակներ կառուցվելու են 9 հորատանցքերի համար: Հարթակների չափերը ընդունվում են 4x6մ: Հարթակների տարածքից հեռացվելու է շուրջ 108մ³ ($24\text{մ}^2 \times 9 \times 0.5\text{մ}$) բազալտի տարաչափ բեկորներ պարունակող հողաբուսական շերտ:

Հորատման հարթակների կառուցման ժամանակ բազալտի տարաչափ բեկորներ պարունակող հողաբուսական շերտը ժամանակավորապես հեռացվում է, կուտակվում հորատման հարթակի մոտ: Հորատման աշխատանքներից հետո հանված հողային զանգվածը օգտագործվում է ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար:

Աշխատանքների ժամանակ նախատեսվում է դեպի Հ-1, Հ-2, Հ-7 և Հ-9 հորատանցքերի հորատման հարթակներ տանող, մոտ 0.95կմ երկարությամբ և 4մ լայնությամբ հողագրունտային ճանապարհների կարգաբերում/վերանորոգում:

4.3 Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն

Լեռնագրական տեսակետից տեղամասի տարածաշրջանում առանձնացվում են երկու խոշոր կառուցվածքային տարրեր՝ Գեղամա լեռները և Կոտայքի սարավանդը: Գեղամա լեռնաշղթան ձգվում է մոտավորապես միջօրեականի ուղղությամբ: Կենտրոնական մասում դա բարձրացած հիմքով լեռնավահան է, մոտ 65 կմ երկարությամբ և 35 կմ լայնությամբ: Լեռնաշղթայի կատարային գոտին անցնում է աստիճանաձև լանջերի և բլրավոր լավային դաշտերի, որոնք շրջապատում են լեռնային զանգվածը հյուսիս-արևելքից, հյուսիսից և հյուսիս-արևմուտքից:

Լեռնաշղթայի հյուսիսային հատվածը կազմված է հզոր լավային ծածկոցներով և թույլ մասնատված է գետային էռոզիայի ցանցով:


Հարավային լանջերը, որոնք կազմված են ավելի հին հրաբխածին առաջացումներով, ենթարկվել են ուժգին սառցադաշտային էկզարացիայի և խորքային գետային էռոզիայի:

Լեռնաշղթայի կատարային մասում շարված են բազմաթիվ հրաբխային կոներ, այդ թվում ամենաբարձր գագաթ Աժդահակը (3597.3մ), Սևկատարը (3225.1մ), Սպիտակասարը (3555.7մ), Նազելին (3312.0մ), Վիշապասարը (3157.7մ), Եռակատարը (2589.6մ), Ծաղկավետը (3076.0մ) :


Կոտայքի (Քանաքեռի) հրաբխային սարահարթը բլրային ռելիեֆով տարածք է՝ կտրտված բազմաթիվ ձորակներով և սարավանդային խոր գետահովիտներով: Սարահարթը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտները: Հարավ-արևմուտքում Կոտայքի սարահարթը աստիճանաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին, արևելքում առաջացնում է Ավանի գոգավորությունը, ապա Գետառ և Զրվեժ գետերի ջրբաժանը : Ունի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ընդհանուր թեքություն, 1200-1500մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ : Տեղ-տեղ բաժրանում են 50-60մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլրակներ և խարամային կոներ :

Հարավային տեղամասի տարածքը իրենից ներկայացնում է մեղմաթեք բլրապատ սարահարթ և բնութագրվում է մեղմ-զառիկող (10-19°) անկում ունեցող ռելիեֆով:

Շրջանի ձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 4 և 5-ում:



Նկար 4.



Նկար 5.

4.4 Մեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ,

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 400 սմ/վ² կամ 0.4g (նկար 6):

Հարավային տեղամասի տարածքում արտածին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005): Համաձայն նշված տեղեկագրի, տեղամասի սահմաններում, ինչպես նաև հարակից տարածքներում սողանքային երևույթներ արձանագրված չեն (նկար 7):

4.5. Կլիմայական բնութագրեր

Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի շրջանի կլիման ցամաքային է, բնութագրվում է որպես ցուրտ (նկար 8):

Մոտակա օդերևութաբանական կայանը գտնվում է Ֆանտան գյուղում: Ամառը զով է, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ծ 15 ին) 45-60%, քամու միջին արագությունը 3.0-6.0 մ/վ, ձմեռը՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին 5-12°C, հարաբերական խոնավությունը (ծ 15 ին) 70% և ավելի, քամու միջին արագությունը 5.0-7.0 մ/վ:

Կլիմայական բնութագրերը ներկայացված են 2-15-րդ աղյուսակներում:


Աղյուսակ 2.

Օդի ջերմաստիճանը ըստ ամսիսների, °C											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
-6.1	-4.7	-0.4	5.9	10.8	14.7	18.0	18.3	14.8	8.9	2.4	-3.5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԵՑՄՄԻԿ ՎՏԱՆԳԻ
ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ**



ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



Նկար 8.

Աղյուսակ 3.

Օդի միջին առավելագույն (մ.ա., համարիչում) և միջին նվազագույն (մ.ն. հայտարարում) ջերմաստիճանը, °C											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
-2.1	-0.6	3.8	10.8	16.4	21.0	24.8	25.5	21.6	14.2	6.6	0.4
-9.1	-8.1	-4.0	1.8	6.1	9.3	12.6	12.7	9.1	4.3	1.0	-6.4

Աղյուսակ 4.

Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը, °C											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
7.7	10.0	20.0	26.0	27.0	31.0	35.5	35.5	34.4	27.0	17.6	15.2
-23.0	-23.1	-21.6	-15.0	-4.2	-2.0	2.1	1.9	-2.0	-11.8	-16.1	-21.5

Աղյուսակ 5.

Ամիս	Օդի նշված ջերմաստիճանով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
Հունիս	4.1	16	0.1	2				
Հուլիս	15.6	31	2.6	15	0.02	1		
Օգոստոս	18.5	31	2.8	15	0.04	1		

Աղյուսակ 6.

Ամիս	Օդի նշված ջերմաստիճանով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
Դեկտեմբեր	1.5	11	0.1	4						
Հունվար	3.5	18	0.3	6						
Փետրվար	2.8	15	0.2	3						

Աղյուսակ 7.

Օդի եքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները, °C (առավելագույն միջինը ա.մ. համարիչում, նվազագույն միջինը՝ ն.մ. հայտարարում)												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարե- կան
3.5	5.0	10.5	18.2	22.5	26.7	30.5	30.7	27.6	20.8	12.9	6.5	31.5
-16.2	-15.5	-12.1	-5.0	1.1	4.7	8.0	8.5	3.8	-1.9	-7.6	-13.7	-18.0

Աղյուսակ 8.

Օդի խոնավությունը ըստ ամսիսների, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Միջին տարեկան
77	75	71	68	68	67	67	63	61	66	73	77	69

Աղյուսակ 9.

Օդի խոնավությունը ամենացուրտ և ամենատաք ամսիսներին, մմ			
ամենացուրտ ամիս		ամենատաք ամիս	
միջին ամսական	միջին ամսական, ժամը 15-ին	միջին ամսական	միջին ամսական, ժամը 15-ին
77	74	63	50

Աղյուսակ 10.

Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
44	51	64	92	99	61	43	23	29	62	53	48	669
31	37	46	48	62	48	51	60	44	64	48	39	64

Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին կազմում են 260մմ, ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ 409մմ:

Աղյուսակ 11.

Ձնածածկույթը			
Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
101	123	307	87

Աղյուսակ 12.

Քամիների կրկնելիությունը

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ							
		Ուղղությունները							
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ
920.2	հունվար	2	8	4	10	29	40	6	1
		4.7	4.6	2.5	2.7	3.3	3.9	3.6	3.6
	ապրիլ	2	19	7	9	23	34	5	1
		5.5	5.2	3.1	3.3	3.6	4.2	4.0	4.0
	հուլիս	9	64	12	4	2	6	2	1
		5.9	5.6	4.0	3.5	2.8	3.6	3.1	4.6
	հոկտեմբեր	2	18	6	8	21	37	7	1
		4.1	4.5	2.9	2.7	3.1	3.6	3.6	3.1

Աղյուսակ 13.

Քամիների միջին արագությունները

Ամիսները	Անդրրի կրկնելությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
Հունվար	41	2.1	ՀսԱրլ	5.6	ՀվԱրմ	3.9
Ապրիլ	24	3.0				
Հուլիս	15	4.3				
Հոկտեմբեր	33	2.3				

Աղյուսակ 14.

Քամու հաշվարկային արագությունը

Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Միջին արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ <n> տարիների ընթացքում		
			25	50	100
819.5	2.7	77	22	23	25

Աղյուսակ 15.

Ուժեղ քամիներով օրերի քանակը

Ամսական միջին արժեքը, օր												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
3.3	4.4	5.5	6.9	6.4	7.8	13.4	13.1	7.4	4.0	2.4	2.6	77

4.6 Մթնոլորտային օդ

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար դիտարկումներ են կատարվում Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում Հարավային տեղամասի, դրա հարակից շրջանում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում (նկար 9):

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Նկար 9.

Հարավային տեղամասի ազդակիր Ֆանտան բնակավայրի մթնոլորտային օդում վնասական նյութերի ֆոնային կոնցենտրացիաները ներկայացվում են համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի» կենտրոն ՊՈԱԿ-ի ժամանակավոր առաջարկությունների:

Աղյուսակ 16.

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	փոշի	ծծմբի երկօքսիդ (SO ₂)	ազոտի երկօքսիդ (NO ₂)	ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Բուն տեղամասի տարածքում փոշու ֆոնային կոնցենտրացիան ընդունվում է 0.0071մգ/մ³, ծծմբի երկօքսիդը 0.006մգ/մ³ և ազոտի երկօքսիդը 0.023մգ/մ³ և ածխածնի օքսիդինը 0.8մգ/մ³:

4.7 Ջրային ռեսուրսներ

Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի շրջանի հիմնական ջրային երակը Հրազդան գետն է, որի հունը գտնվում է տեղամասից ավելի քան 8.5կմ արևմուտք: Հրազդանը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820մ բարձրության վրա լցվում Արաքսը:

Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետը, Գետառը:

Սնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը: Հրազդան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17.


Գետը	Ծախսը, մ³/վ	Տարեկան հոսքը, մլն.մ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ²	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Հրազդան	22.6	714	9.78	308	0.57

Ստորև նկար 10-ում ներկայացված է Հրազդան գետի մոնիթորինգի դիտակետերի ցանցը (ըստ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի պաշտոնական կայքի տվյալների):



Նկար 10.

Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի տվյալների, հանքավայրին ամենամոտ գտնվող դիտակայանում (Արգել գյուղից 5կմ ներքև, դիտակետ 53) ուսումնասիրություններ կատարվել են 2024 թվականի հոկտեմբերին: Նշված դիտակետում Հրազդան գետի որակը համապատասխանում է 2-րդ դասին (նկար 11):




Նկար 11.

Տեղամասի տարածքում ստորգետնյա ջրերի առկայության մասին տեղեկատվություն այս փուլում չկա: Հարակից Ֆանտանի բազալտի հանքավայրի տարածքում ստորգետնյա ջրային ռեսուրսներ չեն հայտնաբերվել: Դրա մասին վկայում են 1967-68թթ.-ին Ֆանտանի բազալտի հանքավայրում կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքները: Հանքավայրերի տարածքում անցած հետախուզական փորվածքներում (հետախուզահորեր, առուններ, հորատանցքեր), ինչպես նաև փորձնական բացահանքերում ստորգետնյա ջրային հորիզոններ չեն հատվել:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակով հայցվող տարածքում նախնական դիտարկումների ժամանակ չեն արձանագրվել նաև աղբյուրներ:

4.8 Հողային ռեսուրսներ

Հայցվող Հարավային տեղամասի շրջանում հողային ծածկույթը ներկայացված է տիպիկ և լվացված սևահողերով, մուգ-շագանակագույն հողերով և մայրական ապարների ելքերով : Հողերի բնական տիպերի բաշխման քարտեզը ներկայացված է նկար 12-ում:



Նկար 12.

Հարավային տեղամասի տարածքում զարգացած են լվացված բերվածքային թույլ հումուսային փոքր հզորության (0.2-0.8մ, միջինը՝ 0.5մ) քարքարոտ հողերը: Սևահողի

զանգվածի հետ խառնված են բազալտի, անդեզիտաբազալտի տարաչափ կտորներ, բեկորներ: Առանձին հատվածներում քարքարոտությունը հասնում է 60-70%-ի:




Հարավային տեղամասի տարածքի հողային ծածկույթի լուսանկարներ

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%): 2024 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղամասի տարածքում կատարվել է հողերի նմուշառում: Նմուշն ուսումնասիրվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հիդրոտեղեկության և մոնիթորինգի կենտրոնի լաբորատորիայում: Նմուշի լաբորատոր հետազոտության արդյունքները ներկայացվում են հավելված 2-ում: 2024 թվականին իրականացված դաշտային դիտարկումների տվյալներով հայցվող տարածքում խախտված/վերականգնված հողեր, լցակույտեր, հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտ չկա :

4.9 Կենսաբազմազանություն

Ֆանտանի բազալտի հանքավայրի տարածքը գտնվում է Գեղամի ֆլորիստիկ շրջանում: Տեղամասի շրջանին բնորոշ բուսականությունը տափաստանային տեսակներով (նկար 13):



Նկար 13.

Տեղամասի և հարակից տարածքներում դիտարկվել են Հայաստանի տարածքի տափաստանային լանդշաֆտներին բնորոշ բուսատեսակներ՝ շյուղախոտ, բարակոտնուկ, ոսկեվարսակ, փետրախոտ, կծմախոտ, ուրց, մակարդախոտ, օշինդր, սեզ, քոսքսուկ, բերենիկե, հազարատերևուկ, գազ, կապար, անթառամ, դաշտավլուկ, կոծուկ, իշակաթնուկ, քեմոն, առնասպար, աբեղախոտ:





Հարավային տեղամասի բուսածածկի լուսանկարներ

Հայցվող տարածքում դիտվել է մասրենու 2 և ալոճենու 3 ծառ:



Տեղամասի տարածքի կենդանական աշխարհի ուսումնասիրության նպատակով կատարվել են դաշտային դիտարկումներ երթուղային եղանակով, ուսումնասիրվել են կենդանիների կենսագործունեության հետքերը, քննարկումներ են կատարվել Ֆանտան գյուղի բնակիչների հետ:

Կատարված դիտարկումների արդյունքներով նշվել են աղվեսի և նապաստակի հետքեր (լցված բույն է հայտնաբերվել), դաշտամկներ: Թռչուններից գրանցվել է գյուղական ծիծեռնակ, դաշտային ճնճղուկ և սովորական կաչաղակ:



Հարավային տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակները հայտնաբերելու նպատակով ուսումնասիրվել են ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն և N72-Ն որոշումները, ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում պահպանվող հերբարիումները, հավաքածուները, ինչպես նաև ՀԱՀ

Յակոբեան բնապահպանական կենտրոնի մասնագետների կողմից մշակված Կարմիր գրքի տեսակների օնլայն ատլասը:

ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներից Ֆանտանի հանքավայրի շրջանում հայտնի են հետևյալ տեսակները.


Աղյուսակ 18.

Բուսական տեսակներ	Կենդանական տեսակներ
- Զագախոտ էգինյան (<i>Erysimum eginense</i> Bornm.) – վտանգված տեսակ, աճում է Զրաբեր գյուղի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,	- Հաստածորիդ լայնացած (<i>Bradyporus dilatatus</i> Stål) – ընդհատված, որ մեծ արեալով տեսակ, հանդիպում է Ֆանտան գյուղի շրջակայքում, մոտ 2կմ հեռավորության վրա,
- Երնջակ Վանատուրի (<i>Eryngium wanaturii</i> Woronow) – վտանգված տեսակ, աճում է Ֆանտան գյուղի շրջակայքում, հանքավայրից մոտ 2կմ հեռավորության վրա,	- Հայկական իծ (<i>Vipera (Montivipera) raddei</i>) – էնդեմիկ տեսակ, պոպուլյացիաներից մեկը կենտրոնացված է Կոտայքի մարզում, Արովանի տարածաշրջանում,
- Կուժկոտրուկ բրդածաղկաբաժակային (<i>Adonis eriocalycina</i> Boiss) – վտանգված տեսակ, աճում է Կապուտան գյուղի շրջակայքում, հայցվող հանքավայրից ավելի քան 4կմ հեռավորության վրա,	- Ասիական լայնականջ չղջիկ (<i>Barbastella leucomelas</i> Gretzschmar) – խոցելի տեսակ, հանդիպում է Արզնի բնակավայրի մոտ, հայցվող տարածքից ավելի քան 10կմ հեռավորության վրա,
- Սոխ Օլթի (<i>Allium oltense</i> Grossh) – վտանգված տեսակ, աճում է Նոր Գեղի և Եղվարդ բնակավայրերի միջև, հանքավայրից մոտ 15կմ հեռավորության վրա :	- Ճպուռ տափակաոտ (<i>Platycnemis pennipes</i>) – սահմանափակ արեալով ծայրահեղ հազվագյուտ տեսակ, հանդիպում է Արզնի բնակավայրի մոտ, հայցվող տարածքից ավելի քան 10կմ հեռավորության վրա,
	Մոմախոտի մեղու (<i>Osmia cerinthides</i> F. Morawitz) - ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ, հանդիպում է Արզնի բնակավայրի մոտ, հայցվող տարածքից ավելի քան 10կմ հեռավորության վրա :
	Քարաքծիվ (<i>Aquila chrysaeto</i>) – սակավաթիվ, խոցելի տեսակ : ՀՀ-ում տարածված է համարյա ամենուրեք, խուսափում է ամբողջական անտառային զանգվածներից : Զբաղեցնում է բաց և կիսաբաց տեսակի բիոտոպերը :

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման ժամանակ կատարվել է Ֆանտանի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքի ուսումնասիրությունն վերը թվարկված տեսակների առկայությունը պարզելու նպատակով: Հայցվող տարածքը 2024 թվականի հոկտեմբեր դիտարկվել է 20մ իրարից հեռավորությամբ երթուղիներով: Դիտարկումների արդյունքներով աղյուսակ 18-ում նշված տեսակները չեն արձանագրվել:


4.10 Անտառային ռեսուրսներ

ՀՀ Կոտայքի մարզում է գտնվում Հրազդանի անտառտնտեսությունը, որը կազմավորվել է 1931 թվականին: Ընդգրկում է 7 անտառպետություններ՝ Մեղրաձորի 7187հա, Ծաղկաձորի 4003հա, Արգականի 8187հա, Բուժականի 1968հա, Արգնիի 2427հա, Երևանի 385հա և Էրեբունու 468հա: Անտառտնտեսության ընդհանուր տարածքը կազմում է 24625հա: Ֆանտան բնակավայրից հարավ-արևմուտք գտնվում են պաշտպանիչ անտառաշերտեր: Հեռավորությունը հայցվող տարածքից մինչև պաշտպանիչ անտառաշերտերը կազմում է 3.1կմ (նկար 14):




Նկար 14.

Անտառտնտեսության կազմում ընդգրկված անտառպետությունների և հարակից բնակավայրերի սխեմատիկ քարտեզները ներկայացված են նկարներ 15-16-ում:



Նկար 15.



Նկար 16.

4.11 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքներն են

- Արզական-Մեղրաձորի արգելավայր – գտնվում է հայցվող տեղամասից մոտ 10կմ հյուսիս-հյուսիս-արևմուտք,

- Բանքսի սոճու արգելավայր – գտնվում է հայցվող տեղամասից մոտ 11կմ հյուսիս-արևելք,

«Սևան» ազգային պարկ – գտնվում է հայցվող տեղամասի տարածքից մոտ 32կմ հեռավորության վրա :

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ:

ՀՀ Կոտայքի մարզում գտնվում են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 19.

Հ/Հ	Անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3
1.	«Անանուն» խզվածքներ	Եղվարդ ավանից հարավ, ավազահանքի մոտ
2.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
3.	«Թագավորանիստ» խարամային կոն	Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
4.	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
5.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
6.	«Ծակ քար» բնական թունել	Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7.	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9.	«Անանուն» լանջային էրոզիա	Ազատ գետի աջակողմյան ափերին
10.	«Անանուն» լավային ծալքեր	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11.	«Անանուն» խորշեր	Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
12.	«Հատիս» հրաբուխ	Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
13.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ


1	2	3
14.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
15.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
16.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17.	«Անանուն» քարե կուտակումներ	Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
18.	«Գութանասար» հրաբուխ	Ֆանտան գյուղից 3 կմ հվ
19.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ
20.	Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	գյուղ Ձորաղբյուր
21.	«Հաղպրտանք» աղբյուր	Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում
22.	«Համով» աղբյուր	Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, Եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
23.	«Քաղցր» աղբյուր	Արգնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին
24.	«Ձորի» աղբյուր	Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
25.	«Ավազան» աղբյուր	Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ
26.	«Սագերի» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
27.	«Վիշապա» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
28.	«Բազմալիճք» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
29.	«Լուսնալիճ» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ
30.	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
31.	«Ռեյիկտային կրկես Քյոռօղլի լեռան մոտ»	Արտավազ գյուղի մոտ
32.	«Ալայան գորգ»	Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում
33.	«Թանթրվենի Տիգրանի»	Արգնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Ֆանտան գյուղից 3 կմ հարավ գտնվում է Գութանասար հրաբուխը, 4-5 կմ հարավ-արևելք՝ «Լեռնահովիտ» քարային կուտակումները, դրանք հանդիսանում են բնության հուշարձան:

«Բնության հատուկ պահպանվող տարածքներ» բաժինը կազմելիս «Լեվ-Շին» ՍՊԸ մասնագետները հաշվի առնվել ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատված տեղադիրքերի հակիրճ նկարագրերը :

Հարավային տեղամասի, Գութանասար հրաբխի և «Լեռնահովիտ» քարային կուտակումների տեղադիրքերը ներկայացված են նկար 17-ում :

ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների անձնագրերը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանները, նկարագրերը դեռևս ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից հաստատված չեն: Հետևաբար, հստակ հեռավորություններ հայցվող Հարավային տեղամասից մինչև մոտակա բնության հուշարձանները նշվել չի կարող:



Նկար 17.

4.12. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով՝ գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող օբյեկտների թվին են պատկանում պատմության և մշակույթի հուշարձանները:

ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատվել է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1793-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով:

Ֆանտան բնակավայրի տարածքում հաշվառված են հետևյալ պատմության և մշակութային հուշարձանները.

Աղյուսակ 20.

Համարը, ենթահամարը			Անվանումը	Ժամանակը	Գտնվելու վայրը
1	2	3	4	5	6
1.			ԱՄՐՈՑ ՎԱՂԱՎԵՐ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 4.5 կմ հվ-աե
2.			ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	քարի դար	գյուղից 2 կմ հվ-ամ, Գուլթանասարի լանջին
	2.1		Բացօթյա կայան 1	քարի դար	
	2.2		Բացօթյա կայան 2	քարի դար	
3.			ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ	քարի դար	գյուղի տարածքում
4.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՎԱՂԱՎԵՐ»	12-17 դդ.	գյուղից 3.5 կմ հվ-աե
	4.1		Տապանաքար	միջնադար	
		4.1.1	Տապանաքար	1567 թ.	
		4.1.2	Տապանաքար	1581 թ.	
		4.1.3	Տապանաքար	16-17 դդ.	
	4.2		Գերեզմանոց	ուշ միջնադար	
		4.2.1	Խաչքար	12-13 դդ.	
	4.3		Եկեղեցի Սբ. Աստվածածին	19 դ.	
	4.4		Մատուռ	միջնադար	
	4.5		Մատուռ	17-18 դդ.	
5.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղից 6 կմ աե
6.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղից 6.5 կմ հս-աե
7.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղի հս-աե մասում
8.			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղից 6 կմ հվ-աե, «Վաղավեր» գյուղատեղիից 1 կմ հվ-աե
9.			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղից 4 կմ հվ
10.			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1980 թ.	գյուղի մեջ

Հայցվող տեղամասը գտնվում է Ֆանտան բնակավայրի բնակելի շինություններից մոտ 2.1կմ հեռավորության վրա, հողատարածքը հանդիսանում է գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող: Այդ տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն: Մոտակայքում, մոտ 0.5կմ հարավ-արևելք գտնվում են Վաղավեր գյուղատեղին, Վաղավեր ամրոցը և Սուրբ Աստվածածին եկեղեցին (նկար 18):

4.13 Ազդակիր համայնքը

Ֆանտանի բազալտի հանքավայրի տարածքը գտնվում է Չարենցավան խոշորացված համայնքի Ֆանտան գյուղական բնակավայրի սահմաններում:

Չարենցավան համայնքը ձևավորվել է 2017 թվականի նոյեմբերի 11-ին ընդունված , ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ անելու մասին ՀՀ օրենքի համաձայն: Համայնքը ընդգրկում է թվով վեց բնակավայր՝ Չարենցավան, Արզական, Ալափարս, Բջնի, Կարենիս, և Ֆանտան: Համայնքի վարչական տարածքը կազմում է 24 525.18 հա: Վարչական տարածքի բաշխումը ըստ բնակավայրերի ներկայացված է աղյուսակ 21-ում :

Աղյուսակ 21.

Բնակավայրը	Հեռավորությունը համայնքի կենտրոնից, կմ	Հեռավորությունը Երևանից, կմ	Տնային տնայն տնտեսությունների թիվը	Տարածքը, հա
Չարենցավան		34	6921	559.76
Ալափարս	6.5	40.5	552	3230.79
Արզական	10.5	37	600	8458.2
Բջնի	14.5	44.5	745	6925.67
Կարենիս	4.5	31	241	882
Ֆանտան	5	33	244	4468.75

Համայնքի մշտական բնակչությունը 01.01.2024թ.-ին կազմում է 32.3հազ.մարդ, որից քաղաքային՝ 22.8հազ.մարդ, գյուղական՝ 9.5հազ.մարդ :

Համայնքի բնակարանային ֆոնդը ներկայացված է աղյուսակ 22-ում :

Համայնքի հողերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակ 23-ում (ըստ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2023-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրի) :

Պատմության, մշակույթի հուշարձանների տեղադրության
սխեմատիկ քարտեզ



Նկար 18.

Աղյուսակ 22.

Բնակավայրը	Բազմաբնակարան շենքեր	Բնակարանների թիվը	Բնակֆոնդի մակերեսը (հա)
ք.Չարենցավան	197	7871	42.66
գ.Ալափարս	2	9	376.1
գ.Արզական	1	4	287.94
գ.Բջնի	1	6	217.44
գ.Կարենիս	-	-	80.88
գ.Ֆանտան	1	4	64.66
Ընդամենը	202	7894	1069.68

Աղյուսակ 23.

Վարչական տարածքը	24525.18հա
Արտադրական նշանակության հողեր	495.02
Գյուղատնտեսական նշանակության հողեր	14999.06
Գերատեսչական հիմնարկների զբաղեցրած հողեր	1.28
Հանգստի գոտիներ	147.43
Անտառային գոտի	7228.03
Ջրային ֆոնդեր	58.8
Բնակավայրի տարածքը	1408.42
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի ենթ.	187.13
Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական հողերը	11215.69
Համայնքի սեփականություն համարվող հողերը	6,923.60
Օտարված և օգտագործման տրամադրված հողերը	7223.62
Օտարված և օգտագործման տրամադրված պետական հողերը	1755.75

Համայնքի ոռոգման ջրի ցանցի վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփված է աղյուսակ 24-ում :

Աղյուսակ 24.

Բնակավայրը	Ջրագծերի երկարությունը, (կմ)	Ոռոգելի կանաչապատ տարածքի մակերեսը (հա)	Ոռոգվում է	
			հա	%
ք.Չարենցավան	6.472	84.11	25.1	37%
գ.Ալափարս	18.9	323.7	317.5	98%
գ.Արզական	5.1	309.9	297.6	96%
գ.Բջնի	10.2	500.3	322.7	65%
գ.Կարենիս	9.1	234.1	217.3	93%
գ.Ֆանտան	3.2	76.4	0	0%
Ընդամենը	52.972	1512.4	1180.2	78%

Հեղեղատարների երկարությունը 5632 գծմ է: Դիտահորերի թիվը՝ 73, անձրևաջրերի ընդունման հորերի թիվը՝ 76: Կոյուղագծերի վնասվածության պատճառով քաղաքի որոշ հատվածներում դրանք խառնվում են հեղեղատարների հետ:

Գոյություն ունի համայնքի ենթակայության 3 կամուրջ, որոնք կառուցման օրվանից չեն հիմնանորոգվել:

Տրանսպորտի և հետիոտների անվտանգ շարժը կազմակերպելու նպատակով վերջին տարիներին տեղադրվել են ճանապարհային երթևեկության անհրաժեշտ նշաններ:

Առկա է կանոնավոր տրանսպորտային հաղորդակցություն շրջակա գյուղերի, մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ: Չարենցավան–Երևան երթուղին ժամանակ առ ժամանակ սպասարկում է նաև որոշակի ներքաղաքային հատված: Այդուհանդերձ ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ գյուղերի հետ տրանսպորտային հաղորդակցության վիճակը մնում է գերծանրաբեռնված:

Համայնքային փողոցների և ճանապարհների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 25-ում:

Աղյուսակ 25.

Բնակավայրը	Ճանապարհների երկարությունը, կմ	Մակերեսը, հազ. քմ
ք.Չարենցավան	74	670
գ.Ալափարս	18.3	91.5
գ.Արզական	15	75
գ.Բջնի	15	75
գ.Կարենիս	9.7	48.5
գ.Ֆանտան	5.5	27.5
Ընդամենը	137.5	987.5

Համայնքում գործող հիմնական արդյունաբերական ձեռնարկություններն են.

Աղյուսակ 26.

Հ հ	Ձեռնարկության անվանումը	Արտադրատեսակները	Աշխատողներ	
			2017	2022
1	2	3	4	5
1.	«Ասկե Գրուպ» ԲԲԸ	Մետաղական ամրաններ	450	618
2.	«ՌՌՌ հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	Հանքային ջուր, աղբյուրի ջուր	337	279
3.	«Հոլանի» ԲԲԸ	Կարի արտադրանք	-	208
4.	«Հաստոցաշինական գործարան» ՓԲԸ	Հատուկ արտադրանք	176	150

1	2	3	4	5
5.	«Յունիվերսալ Էքսպորտ» ՍՊԸ (սեզոնային)	Պահածոներ	-	100
6.	«Զուլակենտրոն» ԲԲԸ	Թուջե, պողպատե ձուլվածքներ	70	88
7.	«Գործիքաշինական գործարան» ԲԲԸ	Գործիքներ, ձուլվածքներ	39	76
8.	«Ալափմետ» ՓԲԸ	Ֆերոհամաձուլվածքներ	-	54
9.	«Տիսկ» ՍՊԸ (սեզոնային)	Հյուսիս, գյուղմթ. վերամշակ.	-	40
10.	«Խորդա» ՍՊԸ	Ավտոմատիկայի/չափիչ սարքեր	63	30
11.	«Լիզին» ԲԲԸ	Սպիրտ	-	26
12.	«Կայծ» ՓԲԸ	Հոսանքի աղբյուրներ		21
Ընդամենը			1135	1690

Համայնքում սկզբնավորվել են նաև ալկոհոլային նոր արտադրություններ, շարունակում են ծավալվել կարի արտադրամասերը:

Համայնքի տարածքում գործող առևտրի ու սպասարկման օբյեկտներն են՝

Աղյուսակ 27.

Առևտրի օբյեկտներ	280
Կենցաղային ծառայությունների, սպասարկումների փոքր ու միջին օբյեկտներ այդ թվում	90
հեղուկ վառելիքի	7
տեխնիկական հեղուկների	9
թանկարժեք մետաղների	3
գազի լիցքավորման կետ	5
սզո ծիսակատարությունների	3
հանրային սննդի կետ	20

Համայնքի տարածքում գործում են էլեկտրացանց, ջրմուղ-կոյուղու սպասարկման, գազամատակարարման, գազի սպասարկման ձեռնարկություններ, ներկայացված են բջջային և ֆիքսված հեռախոսակապի, ինտերնետի օպերատորներ, առկա են մի քանի բանկերի մասնաճյուղեր՝ ԱԿԲԱ Բանկ, Արարատբանկ, Արդշինբանկ, ՎՏԲ-Հայաստան Բանկ, Կոնվերս Բանկ, գյուղական բնակավայրերում բանկոմատ առկա է միայն Արզականում:

Վերջին տարիներին զարգանում է ինտենսիվ այգեգործության ոլորտը, մասնավորապես խնձորի, մոշի և օրգանական ազնվամորու արտադրությունը: Վերջինիս արտադրության ծավալներով համայնքը առաջատար դիրքեր ունի հանրապետությունում, հատկացված հողատարածքները կազմում են ավելի քան 40 հա:

Փոքր ծավալով սկզբնավորվել է դամասկոսյան վարդի արտադրությունը, որն իր բարձրարժեքության հաշվին եկամտաբեր լինելուց բացի պարունակում է նաև ագրոտուրիզմի զարգացման նախադրյալներ, ծավալվում է նաև մեղվաբուծությունը:

Հացահատիկային մշակաբույսերից տարածված են ցորենը, գարին, կտավատն ու հաճարը: Լայնորեն մշակվում են լոբի, սխտոր, լոլիկ, վարունգ և այլ բանջարեղենային կուլտուրաներ: Պետական աջակցության ոլորտային խթանման տարբեր միջոցառումներից օգտվել են գյուղերի բնակիչների/տնտեսությունների գերակշիռ մասը:

Համայնքի հանրակրթական դպրոցների վեբաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 28-ում:

Նպաստառու ընտանիքների թիվը 943 է, հաշվանդամների թիվը՝ 1752 մարդ, գործազուրկ են համարվում 1364 մարդ:

Աղյուսակ 28.

Դպրոցը	Աշխատակից	Մանկավարժ	Աշակերտ	Նախագծային հզորություն	Մակերես, ք.մ
N 1 ավագ	66	53	495	832	7068.5
N 2 հիմն.	53	36	627	920	4534
N 3 հիմն.	72	46	832	841	5809.7
N 4 հիմն.	62	39	660	964	5261.5
N 5 հիմն.	63	46	678	735	4902.35
N 6 հիմն.	59	40	578	850	10213.7
Ալափարս	35	26	228	520	3012
Արզական	45	28	307	540	3145
Բջնի	41	30	340	524	4195
Կարենիս	23	15	85	150	1646
Ֆանտան	29	23	115	200	2400

Համայնքում գործում է 1 պետական քոլեջ 264 ուսանողներով և 47 աշխատակիցներով (27 մանկավարժներ): Քոլեջի մասնագիտությունները՝ ստորև:

Միջին մասնագիտական կրթական ծրագրով՝

1. Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ
2. Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում
3. Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և դրոսաշրջային համալիրներում
4. Հաշվապահական հաշվառում
5. Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և դրոսաշրջային համալիրներում

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով՝

1. Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում
2. Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում
3. Խոհարարական գործ:

Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 29-ում:

Աղյուսակ 29.

Հ/հ	Անվանումը, բնակավայրը	Աշխատողների թիվը		Երեխաների թիվը	
		2017	2022	2017	2022
1.	«Ծիծեռնակ» մ/մանկապարտեզ, Չարենցավան	49	59	220	295
2.	«Լուսաբաց» մ/մանկապարտեզ, Չարենցավան	26	26	56	110
3.	«Հեքիաթ» մ/մանկապարտեզ, Չարենցավան	26	25	100	100
4.	«Հրաշք» մ/մանկապարտեզ, Չարենցավան	51	52	315	308
5.	«Զանգակ» մ/մանկապարտեզ, Չարենցավան	20	20	65	-
6.	Ա.Խաչատրյանի անվ. մանկ. երաժ. դպրոց, Չարենցավան	65	61	555	330
7.	Գառզուի անվ. արվեստի դպրոց, Չարենցավան	81	68	404	467
8.	Ա.Մանուկյանի անվ. մանկ. մարզադպրոց, Չարենցավան	30	43	296	380
9.	Մանկապատ. ստեղծագ. կենտրոն, Չարենցավան	16	18	139	158
10.	Քաղաքային գրադարան (ընթերցող), Չարենցավան	18	18	-	1605
11.	«Մշակույթ» /կանաչապ., բարեկարգ./, Չարենցավան	58		-	
12.	Արզականի մանկապարտեզ ՀՈԱԿ	11	17	62	69
13.	Արզականի արվեստի դպրոց	14	17	101	130
14.	Ալափարսի մանկապարտեզ ՀՈԱԿ	11	18	65	69
15.	Ալափարսի մշակույթի տուն			-	
16.	Բջնիի մանկապարտեզ ՀՈԱԿ	13	20	90	95
	Համայնքում գործում են նաև (5-6 տարեկանների համար)՝				
1.	Կարենիսի դպրոցահեն նախակրթարան	-	1	-	6
2.	Չարենցավանի թիվ 6 հիմնական դպրոցի նախակրթարան	5	3	125	60

Օրակարգում է Ֆանտանի նախակրթարանի/մանկապարտեզի հիմնման խնդիրը՝ պետական օժանդակությամբ:

Համայնքի տարածքում գործում է «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, որն իր մեջ միավորում է պոլիկլինիկան, ներառյալ՝ Կարենիս և Ֆանտան գյուղերի ֆելդշերամանկաբարձական կետերը:

Բազալտի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տեղամասի տարածքը ներկայացված է համայնքային սեփականության գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով: Հողատարածքը 5 տարի ժամկետով վարձակալված է «Լեվ-Շին» ՍՊ ընկերության կողմից:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է համայնքի բնակիչներին:

Քննարկվել է աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև ընկերության կողմից համայնքին սոցիալ-տնտեսական աջակցության հնարավոր ծրագրերի հարցը :

Կից ներկայացվում են քննարկման տեսաձայնագրությունը և արձանագրությունը :

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

5.1. Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա

Մթնոլորտային օդի վրա նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ազդեցությունը լինելու է նվազագույն:

Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշման՝ տեղանքում մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունն ստացվում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կայքից: Եթե տվյալ բնակելի տարածքի համար համապատասխան տեղեկատվությունը ֆոնային աղտոտվածության վերաբերյալ բացակայում է, ապա 10000 մարդուց պակաս բնակելի տարածքների համար ֆոնային աղտոտվածության խտություններն ամենատարածված աղտոտող նյութերի համար ընդունվում են՝ ծծմբի երկօքսիդի համար՝ 0.006մգ/մ³, ազոտի օքսիդների համար՝ 0.023 մգ/մ³, ածխածնի օքսիդի համար՝ 0.8մգ/մ³, չտարբերակված անօրգանական փոշու համար՝ 0.071մգ/մ³:

Հայցվող տարածքում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներն են հորատումը, փորձնական բացահանքի անցումը և ճանապարհներով աշխատանքները սպասարկող մեքենայի տեղաշարժը:

Աշխատանքների ընթացքում արտանետումների կողմնորոշիչ քանակները ներկայացված են աղյուսակ 30-ում:

Աղյուսակ 30.

Հ/Հ	Վնասակար նյութի անվանումը	Ընդամենը
1	Ածխածնի օքսիդ (CO)	1.9գ/վրկ
2	Ածխաջրածին	0.7գ/վրկ
3	Ազոտի երկօքսիդ	0.55գ/վրկ
4	Մուր	0.11գ/վրկ

5.2. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային և գրունտային ջրերը բացակայում են: Տեղամասի տարածքը թափվող մթնոլորտային տեղումները ներ են ծծվում բազալտների հաստվածքի ճաքերի և ծակոտիների միջով և հեռանում է ինքնահոս կերպով:

Նախնական տվյալներով, Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկական ջրի օրական ծավալը կկազմի մոտ 4մ³: Տեխնիկական ջուրը անհրաժեշտ է լինելու հորատման հրապարակները, փորձնական բացահանքի տարածքը և մոտեցնող ճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Տեխնիկական, կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը մատակարարվում է Ֆանտան բնակավայրից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից, ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Խմելու ջուրը գնվում է շալցված տարբերակով Ֆանտան բնակավայրի առևտրի կետերից:

Կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են անթափանց բետոնային լցարանում, որտեղից աշխատանքների ավարտից հետո տեղափոխվում են սահմանված կարգով:

5.3. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա

Հողային ռեսուրսների վրա հնարավոր է երկու տեսակի ազդեցությունը, ինչի նկարագիրը ներկայացվում է ստոն.

- խախտում հորատման հրապարակների, փորձնական բացահանքի և մոտեցնող ճանապարհների տարածքում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հողաբուսական շերտը խախտվելու է հորատման հրապարակների (216մ²), փորձնական բացահանքի (60մ²) և մոտեցնող ճանապարհների (3800մ²) տարածքում: 0.5մ միջին հզորությամբ և 2038մ³ ծավալով քարքարոտ, բազալտի տարաչափ բեկորներով սևահողերը նախապես հեռացվելու են, կուտակվելու են փորվածքների և ճանապարհի անմիջական հարևանությամբ, գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողերի վրա և այնհուհետև օգտագործվելու են ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

- աղտոտում նավթամթերքներով մեքենաների տեղաշարժման ժամանակ:

5.4. Ազդեցություն կենսաբազմազանության վրա

Հարավային տեղամասի սահմաններում Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում կարճաժամկետ կտրվածքով խախտվելու է տափաստանային տարախոտահացահատիկային տեսակներով ներկայացված բուսածածկը մոտ 4076մ² տարածքում (216մ² հորատման հարթակներ, 60մ² փորձնական բացահանք և 3800մ² մոտեցնող ճանապարհներ):

Տեղի կունենա կենդանիների՝ հիմնականում, կրծողների միգրացիա Հարավային տեղամասի տարածքից, քանի որ գործարկվող սարքավորումների աղմուկը, թրթռումները և անձնակազմը հանդիսանալու են անհանգստացնող գործոններ:

Տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ, անտառային զանգվածներ չեն արձանագրվել:

Ֆանտանի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք, այստեղ հաշվառված չեն բնության հուշարձաններ:

Հետևաբար, պահպանվող էկահամակարգերի և անտառային ռեսուրսների վրա որևցե ազդեցության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

5.5. Աղմուկ և թրթռումներ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը մոտակա բնակավայրի տարածքում:

Ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կազմում է 45 դԲԱ: Աղմուկի ազդեցությունը ազդակիր Ֆանտան բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հարավային տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրը աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի տեղաշարժն է, փորձնական արդյունահանման և հորատման հաստոցի աշխատանքը:

Երևակման տարածքում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 80դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ բանաձևով, որտեղ՝$

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=80դԲԱ,

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta LA_{հեռ}$ կազմում է 25դԲԱ,

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով, $\Delta LA_{էկր} = 10 \text{ դԲԱ}$,

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ} = 5 \text{ դԲԱ}$:

Աղմուկի մակարդակը Ֆանտան բնակավայրի մոտ կկազմի՝

$L_{առաք} = L_{աէկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 80 - 25 - 10 - 5 = 40 \text{ դԲԱ}$ (նորման 45 դԲԱ):

Գիշերային ժամերին երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ տեղամասի սահմաններում չեն կատարվելու:

Ֆանտանի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքում հորատման հաստոցի աշխատանքից ձևավորվում է մոտ 109 դԲ տեղային թրթռում: Բուլդոզեր-էքսկավատոր լեռնատրանսպորտային համակարգի աշխատանքից ձևավորվող 1-ին կարգի ընդհանուր թրթռման արագացումը կկազմի 112 դԲա:

5.6. Ընդերքօգտագործման թափոններ

Հարավային տեղամասում մակաբացման շերտը ներկայացված է խիստ քարքարոտ սևահողերով: Սևահողերը ընդերքօգտագործման թափոններ չեն հանդիսանում, քանի որ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշման.

- հողերի բերրի շերտը օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով,

- հողերի պահպանության նպատակով՝ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանվում և պահպանվում է,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

Հարավային տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում առաջացող ընդերքօգտագործման թափոններն են փորձնական արդյունահանման ժամանակ գոյացող բազալտների ջարդոնը, կտորտանքը (մոտավորապես 47 մ³):

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների՝ բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած մակաբացման ապարները հաշվառվել են 34000100 01 00 0 ծածկագրով (Ժայռային մակաբացման ապարներ՝ 34000110 01 99 5,

փխրուն մակաբացման ապարներ՝ 34000120 01 99 5): Դրանք վերագրվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Ընդերքօգտագործման թափոնները կարճաժամկետ կտրվածքով կուտակվելու են փորձնական բացահանքի հատակում, այնուհետև ամբողջությամբ օգտագործվելու են ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջանում են մի շարք արտադրական թափոններ, այդ թվում.

- Հորատման թագիկների թափոններ, որոնք բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են: Վերագրվում են «Չտեսակավորված պողպատ պարունակող թափոններ (այդ թվում՝ պողպատի փոշի)» տեսակին: Ծածկագիրը՝ 3512011101004: Կազմը՝ Fe, Fe₂O₃, C, Pb: Քանակը՝ մոտ 65կգ: Հորատման աշխատանքները կատարվելու են մասնագիտացված ընկերության կողմից, որն էլ պարտավոր է հավաքել մաշված հորատման թագիկները և տեղափոխել վերամշակման համապատասխան վայր: Ընկերությունը այս տեսակի թափոնների կառավարման աշխատանքների չի կատարելու:

- Ներքին այրման շարժիչներով աշխատող մեքենաների նորոգման-շահագործման աշխատանքների ժամանակ առաջանալու են բանեցված շարժիչների յուղեր (մոտ 10լ): Ծածկագիրը՝ 54100201 02 03 3: Կազմը՝ յուղ 94.6%, մեխանիկական խառնուկներ 2.1%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Գտնվում է հեղուկ ագրեգատային վիճակում, խտությունը՝ մոտ 910կգ/մ³:

Օգտագործված քայուղերի և իրենց սպառողական հատկությունները կորցրած (կամ բանեցված) յուղերի թափոնները, որոնք (համաձայն պայմանագրի և վավերագրի) փոխարինվում են հարակից բնակավայրերի տարածքում գործող մասնագիտացված կազմակերպություններում: Հետևաբար, բուն երկրաբանական աշխատանքների տարածքում վերը նշված թափոնները չեն կուտակվում՝ պահվում:

- Առաջանալու է նաև 0.6տ չտեսակավորված կենցաղային աղբ, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004: Կազմը՝ ապակի, փայտ,

թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ:

Կենցաղային թափոնը փոխադրվելու է մոտակա աղբավայր, աղբահանության նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Թափոններն առաջանալու են երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների դաշտային փուլում՝ 2025 թվականի 2-3-րդ և 2026 թվականի 2-3-րդ եռամսյակներում:

5.7. Պատմամշակութային միջավայր

Ֆանտան բնակավայրի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները գտնվում են հայցվող Հարավային տեղամասի տարածքից նվազագույնը 0.5կմ հեռավորության վրա, հետևաբար դրանց վրա որևիցե ազդեցություն դրսևորվել չի կարող:

5.8. Անտառային ռեսուրսներ

Անտառային զանգվածները գտնվում են Ֆանտանի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքից 3.1կմ հեռավորության վրա: Հետևաբար, անտառային ռեսուրսների/անտառապատ տարածքների վրա որևէ ազդեցություն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

5.9. Սոցիալ-տնտեսական ազդեցություն

Ֆանտան բնակավայրի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն «Լեվ-Շին» ՍՊԸ ընկերության կողմից 350.0հազ.դրամ չափով ֆինանսական աջակցություն, ինչպես նաև տեխնիկայի տրամադրման հարցում: Աջակցության նպատակն է հարթեցնել, տոփանել և բարեկարգել բնակավայրի գերեզմանոցին տանող ճանապարհը:

5.10 Սանիտարական-պաշտպանիչ գոտի.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շինարարական նորմերով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական-պաշտպանիչ գոտու սահմանում նախատեսված չէ:

6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ

Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքը գտնվում է Չարենցավան խոշորացված համայնքի Ֆանտան բնակավայրի սահմաններում:

Հայցվող տեղամասը գտնվում է Ֆանտան բնակավայրի բնակելի շինություններից մոտ 2.1կմ հեռավորության վրա: Չարենցավան քաղաքի շինություններ գտնվում է հայցվող տարածքից մոտ 4.6կմ հեռավորության վրա: Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման Մ-4 միջպետական նշանակության ավտոճանապարհը անցնում է Հարավային տեղամասից մոտ 4.7կմ, իսկ Մ4 - Ջրաբեր-Հրազդան -Հրազդանի քրեակատարողական հիմնարկ Հ-1 հանրապետական նշանակության ավտոճանապարհը՝ մոտ 3.6կմ հեռավորությունների վրա: Մոտ 5.9կմ հեռավորության վրա է գտնվում Հարավկովկասյան երկաթուղու Երևան-Սևան (Վարդենիս) երկաթուղային գիծը, մոտ 5.8կմ հեռավորության վրա՝ Արգել ՀԷԿ-ի դերիվացիոն ջրանցքը:

Աշխատանքների ընթացքում առաջացող փոշու, ծխազագերի արտանետումները և աղմուկի մակարդակը գտնվում են թույլատրելի սահմաններում, արտադրական արտահոսքեր, վտանգավոր թափոններ տեղամասի տարածքում չեն առաջանալու, հետևաբար բազալտների երկրաբանական ուսումնասիրության արդյունքում գյուղի բնակչության առողջության վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում:

Տեղամասի տարածքում աշխատողների առողջության վրա ազդեցությունները կապված են լինելու հետևյալ գործոնների հետ.

1. Շնչառական խնդիրներ, որոնք պայմանավորված են հետախուզական աշխատանքների և ավտոտրանսպորտի տեղաշարժի ժամանակ առաջացող փոշու արտանետումներով;
2. Լսողական խնդիրներ, որոնք պայմանավորված են հորատման հաստոցի, էքսկավատոր-բուլդոզեր-բեռնատար լեռնատրանսպորտային համակարգի աշխատանքի ժամանակ առաջացող ձայնային ազդեցություններով:
3. Թրթռումներ, որոնք պայմանավորված են հորատող հաստոցի, էքսկավատոր-բուլդոզեր-բեռնատար լեռնատրանսպորտային համակարգի աշխատանքային ռեժիմով:

Աշխատակիցների առողջության համար ռիսկերը բացառելու/չեզոքացնելու նպատակով նախատեսվում է տարածքի ջրցանում/խոնավեցում, ինչի նպատակն է փոշու արտանետումների կրճատում: Միաժամանակ, տեղամասի տարածքում շաբաթական մեկ անգամ կատարվելու է մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաների մոնիթորինգ, ինչը թույլ կտա հսկել իրականացվող գործունեության համապատասխանությունը նորմատիվային փաստաթղթերին:

Ձայնային ազդեցությունը անձնակազմի առողջության վրա նվազեցնելու համար աշխատակիցները կրելու են ձայնամեկուսիչ ականջակալեր: Տեղամասի տարածքում պարբերաբար կատարվելու է նաև ձայնի մակարդակի մոնիթորինգ:

Աշխատանքների ընթացքում թրթռումների մակարդակը կարգավորելու նպատակով ընկերության կողմից նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- 1) տրանսպորտային միջոցների վարորդի նստատեղի համապատասխանեցում գործող նորմերին,
- 2) մեքենայի տեխնիկական զննման պարբերական իրականացում,
- 3) մեքենայի տեղաշարժի արագության համապատասխանեցում ճանապարհային պայմաններին,
- 4) մեքենայի վարման ընթացքում կտրուկ գործողությունների /կտրուկ արագացում, արգելակում/ բացառում,
- 5) երթևեկության ուղեծրի մաքրում խոշոր քարերից, բեկորներից,
- 6) երթևեկության ուղեծրով փոստրակների, խանդակների, առուների լցում և տոփանում,
- 7) վարորդի կողմից վիբրացիոն բեռնվածության կարգավորում՝ արագության, փոխանցումատուփի աշխատանքի ձևաչափի, աշխատանքային գրաֆիկ:

Տեղամասում տեղադրվելու է վագոն-տնակ, որտեղ կազմակերպվելու է աշխատակիցների հանգստի և սնունդ ընդունելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

Վագոն-տնակը կահավորվելու են անհատական պահարաններով՝ ըստ աշխատակիցների քանակի:

Կազմակերպվելու է լվացարան, որը մշտապես ապահովված է լինելու անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաներով, ջրով: Կազմակերպվելու է հորային տիպի 1-աչքանի արտաթոց:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերի լիցքավորման կայաններում, որտեղ առկա են համապատասխան պայմաններ:
- Մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններում, որտեղ առկա են անհրաժեշտ պայմաններ:
- Նավթամթերքների, նավթամթերք պարունակող մնացորդների պահեստավորում և պահում Հարավային տեղամասի տարածքում չի կատարվելու:
- Արտանետվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով մոտեցնող ճանապարհի, հորատման հարթակների և փորձնական բացահանքի տարածքի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :
- Կեղտաջրերի հավաքում հորատի պետոնապատ անջրաթափանց զուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկում են հատուկ ծառայության ուժերով, իսկ արտաքնոցի հորը լցվում է քարերով:
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:
- Մաշված հորատման թագիկները հեռացվելու են տեղամասի տարածքից հորատման աշխատանքները իրականացնող մասնագիտացված ընկերության կողմից, դա հանդիսանում է հորատման գործընթացի բաղկացուցիչ մաս :
- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Հորատման հրապարակների և փորձնական բացահանքի անցման, ճանապարհի բարեկարգման ժամանակ 0.5մ հզորությամբ քարքարոտ սևահողերի հեռացում և կուտակում կարճաժամկետ կտրվածքով փորվածքների և ճանապարհի անմիջական հարևանությամբ: Հողի բերրի շերտը հանվում է տարվա տաք և չոր ժամանակաշրջանում: Նախքան բերրի շերտը հանելը՝ կատարվում են հողի մակերեսից

կոճղերի, թփերի և խոշոր քարերի մաքրման նախապատրաստական աշխատանքներ: Կուտակումը հորատման հարթակների և բացահանքի մոտ կատարվում է մեկ շաբաթ ժամկետով, ճանապարհի հարակից տարածքում՝ առավելագույնը՝ մեկ տարի, մինչև դաշտային աշխատանքների ավարտը :

- Ռեկուլտիվացիոն աշխատանքներ հորատման հրապարակների, փորձնական բացահանքի և մոտեցնող ճանապարհների տարածքում: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կկազմի 4076մ², աշխատանքների ծավալը՝ 2038մ³: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ փորձնական բացահանքի տարածք նախ լցվում են բլոկների փորձնական արդյունահանման ժամանակ առաջացած բազալտի ջարդոնը, կտորտանքը մոտ 46.95մ³ ծավալով (թափոնի ընդհանուր ծավալը 47մ³ է, 0.05մ³-ը վերցվելու է որպես նմուշ թափոնների ֆիզիկամեխանիկական փորձարկման համար), այնուհետև վրան փովելու է 30մ³ ծավալով քարքարոտ սևահողերի շերտը: Հորատման հարթակների տարածք հետ է հրվում 108մ³, մոտեցնող ճանապարհների տարածք՝ 1900մ³ քարքարոտ սևահողերի զանգված: Հետլցման աշխատանքներից հետո տարածքները հարթեցվելու և փխրեցվելու են, կատարվելու է պարարտացում բնական տորֆով և ցեոլիտային հիմքի վրա պատրաստված պարարտանյութերով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների եզրափակիչ փուլում կատարվելու է հացահատիկային-տարախոտային բույսերի (փետրախոտ, շյուղախոտ, բարակոտնուկ, սիզախոտ, օշինդր, ուրց) սերմերի ցանք:

Ռեկուլտիվացիոն ծախսերի հաշվարկը ներկայացված է աղյուսակ 31-ում:

Աղյուսակ 31.

Հ/Հ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավորը	Արժեքը
1	2	3	4
1.	Ընդերքօգտագործման թափոնների հետլցնում փորձնական բացահանքի տարածք	հազ.դրամ	35.0
2.	Քարքարոտ սևահողերի հետլցնում ճանապարհի, փորձնական բացահանքի և հորատման հարթակների տարածք, հարթեցում, փխրեցում	«___»	218.0
3.	Պարարտացում	«___»	50.0
4.	Սերմերի ձեռք բերում	«___»	25.0
5.	Աշխատավարձ ռեկուլտիվացիայի լեռնատեխնիկական փուլի աշխատանքների համար	«___»	75.0
6.	Նյութեր /բահեր, դուլյ, ձեռնոցներ/ ռեկուլտիվացիայի լեռնատեխնիկական փուլի աշխատանքների համար	«___»	42.0

7.	Աշխատավարձ ռեկուլտիվացիայի կենսաբանական փուլի համար	«___»	95.0
	Ընդամենը	«___»	540.0
8.	ԱԱՀ	«___»	108.0
9.	Չնախատեսված ծախսեր	«___»	28.6
	Ընդամենը	«___»	676.6

- Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում թռչունների բների հայտնաբերման նպատակով : Առկայության դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս :

- Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային ալիքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար : Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից :

- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ :

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հոդերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում :
- Աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում:
- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

- ✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
- ✓ պետական մարմինների ծանուցում,
- ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ուշացումները:

Հարավային տեղամասի տարածքում տեղադրվելու է շարժական վագոն-տնակ, աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով:

Նախատեսվում է լվացարան, ջրցուղարան չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատակիցները երեկոյան վերադառնում են Ֆանտան բնակավայրում վարձակալված տուն: Սա նաև թույլ կտա նվազեցնել կենցաղային կեղտաջրերի ծավալը:

Ծրագրավորված բնապահպանական միջոցառումները ներկայացվում են նաև աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 32.

Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Չեզոքացման միջոցառումը	Արժեքը
1	2	3	4
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Փոշու և ծխազագերի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի փոփոխություն	Ջրցան	Տարեկան 70.0հազ.դրամ
		Արտանետվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում	Լրացուցիչ ծախս չի նախատեսվում
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մոնիթորինգ	Տարեկան 120.0հազ.դրամ
	Հողերի խախտում հորատման հարթակների, փորձնական բացահանքի, ճանապարհի տարածքում	Հողի շերտ նախնական հեռացում և պահպանում:	120.0հազ.դրամ
		Խախտված տարածքների վերականգնում	676.6հազ.դրամ*

	Երևական տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, Օգտագործված քսայուղերի և իրենց սպառողական հատկությունները կորցրած (կամ բանեցված) յուղերի թափոնները, որոնք (համաձայն պայմանագրի և վավերագրի) փոխարինվում են հարակից բնակավայրերի տարածքում գործող մասնագիտացված կազմակերպություններում:, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում:	Այս հոդվածով ծախսեր չի իրականացնելու
		Հողերի աղտոտվածության պարբերական մոնիթորինգ	Տարեկան 80.0հազ.դրամ
Հետախուզական փորվածքների անցում	Բուսածածկի խախտում հորատման հրապարակների և փորձնական բացահանքի սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում	676.6հազ.դրամ*
		Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ	Տարեկան 500.0հազ.դրամ
		ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում	Տարեկան 75.0հազ.դրամ
	Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	676.6հազ.դրամ*
		Աղմուկի մակարդակի չափումներ	Տարեկան 100.0հազ.դրամ
Անձնակազմի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Տեղամասի տարածքի աղբոտում կենցաղային թափոններով	Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր	Տարեկան 150.0հազ.դրամ
	Տեղամասի տարածքի աղտոտում կենցաղային արտահոսքերով	Հորատի պ բետոնապատ անջրաթափանց զուգարանի շինարարություն	25.0հազ.դրամ
		Հորատի պ զուգարանի դատարկում հատուկ ծառայության ուժերով	Տարեկան 80.0հազ.դրամ

* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

**8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՑԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատվել է մինչև 20235 թվականը հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը: Մշակված և հաստատված ռազմավարության հիմնական նպատակն է ոլորտի կարգավորման ու զարգացման, ընդերքի ռացիոնալ և համալիր օգտագործման, բնապահպանական և առողջապահական ռիսկերի կառավարման ու մեղմման, եկամուտների համաչափ/արդարացի բաշխման մեխանիզմների սահմանումը, որոնք կնպաստեն Հայաստանի տնտեսության երկարաժամկետ զարգացմանը:

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման տեսլականը հիմնված է մի շարք ուղենիշային սկզբունքների վրա, այդ թվում.

1. Հայաստանի Հանրապետության ընդերքում առկա օգտակար հանածոների պաշարները պետք է ծառայեն ներկա և ապագա սերունդներին

Ընդերքում առկա օգտակար հանածոները գրեթե ամբողջությամբ, բացառությամբ ջրի և գետային ավազաններում առկա ավազի, չվերականգնվող են: Հետևաբար կարևոր է, որ առկա պաշարների արդյունավետ օգտագործմանը և ստացվող օգուտների արդարացի բաշխմանը զուգընթաց իրականացվի նոր պաշարների հայտնաբերում: Հարավային տեղամասի տարածքում օգտակար հանառյի պաշարները երկաթանական ուսումնասիրության աշխատանքները նախաձեռնել է «Լեվ-Շին» ՍՊ ընկերությունը, աշխատանքները իրականացվելու են ընկերության ֆինանսավորմամբ, ապահովելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները:

2. Հանքարդյունաբերությունը պետք է նպաստի ողջ հանրության բարեկեցությանը:

Ընդերքը շահագործում են ֆինանսապես և տեխնիկապես կարող ընկերությունները, սակայն ընդերքի շահագործումից ստացված օգուտները պետք է հասանելի լինեն ողջ հասարակությանը: Նույն տր Բամաբանությամբ՝ օգտակար հանածոների արդյունահանման գործընթացը չպետք է բեռ դառնա ազդակիր համայնքների համար: «Լեվ-Շին» ՍՊ ընկերությունը ծրագրավորվող աշխատանքների ընթացքում նախատեսում է ֆինանսական աջակցություն ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին: Հանքարդյունահանման ընթացքում ստեղծվելիք,

արդիական սարքավորումների շահագործման, հանքի սպասարկման և մատակարարման հետ կապված նոր աշխատատեղերը կնպաստեն գործազրկության կրճատմանը, արտագաղթի կանխմանը:

3. Հանքարդյունաբերության ոլորտի խնդիրը ոչ միայն բացասական ազդեցությունները մեղմելն է, այլ նաև գուտ դրական ազդեցություններ ձևավորելը:

Ժամանակակից հանքարդյունաբերության ամենաբարձր ստանդարտները պահանջում են ընդհանուր հաշվեկշռում բացասական ազդեցության մեղմման ու դրական ազդեցություն թողնելու միջոցառումների ապահովում, ինչը հնարավոր է իրականացնել գործնականում: «Լեվ-Շին» ՍՊ ընկերությունը մշակել և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն է ներկայացնում է բնապահպանական կառավարման համապարփակ պլան, որտեղ դիտարկվում են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա ազդեցությունների կանխարգելման և չեզոքացման համալիր միջոցառումներ:

Ամփոփելով վերը նշվածը, կարող ենք փաստել, որ «Լեվ-Շին» ՍՊ ընկերության կողմից Ֆանտանի բազալտի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքում ծրագրավորվող ընդերքօգտագործման աշխատանքները իրենց բնույթով համապատասխանում են ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության ուղենիշային սկզբունքներին:

9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ԾՐԱԳԻՐԸ

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ ;
2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով երևակման տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ ամսեկան մեկ անգամ;
3. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասում և հարակից տարածքներում) ;
4. աղմուկի մակարդակի վերահսկողություն :


Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 780.0հազ.դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 19-ում:

Մշտադիտարկումների կառուցվածքները ներկայացվում է նաև աղյուսակ 33-ում:

Մշտադիտարկումների օբյեկտը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4
Մթնոլորտային օդ, տեղամասի տարածք աշխատանքների իրականացման վայր, ճանապարհներ	Փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	Աշխատանքների իրականացման վայր, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ, տեղամասի տարածք, աշխատանքների իրականացման վայր	Նավթամթերքների հետքեր	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Տեղամասի տարածք, ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. տեղամասի տարածք և հարակից շրջան	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տեղամասի և հարակից տարածքներ, տարեկան մեկ անգամ
Աղմուկի մակարդակ, Ֆանտան բնակավայրի արվարձաններ	Ձայնային բնութագիր	Չափումներ ավտոմատ սարքերով	Տարեկան մեկ անգամ



Նկար 19.

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում; Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Հարավային տեղամասի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 400սմ/վրկ² կամ 0.4g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ):

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են վագոն-տնակում:

Ֆանտանի բազալտների հանքավայրի Հարավային տեղամասի տարածքում սողանքային մարմիններ չկան, հետևաբար սողանքային երևույթների հետ կապված արտակարգ իրավիճակներ չեն լինելու :

11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Մասնավորապես, «Լեվ-Շին» ՍՊ ընկերության վարչակազմը պարտավորվում է ապահովել աշխատանքների տեխնիկական անվտանգության հետ կապված հետևյալ պահանջները.

- աշխատանքի են թույլատրվում համապատասխան մասնագիտական կրթություն կամ որակավորում ունեցող անձիք,

- աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմը յուրաքանչյուր դաշտային սեզոնից առաջ անցնում է պարտադիր անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում,

- բացառվում է աշխատանքների իրականացումը այն տարածներում, որտեղ հնարավոր են սողանքային, քարաթափման, սելավային երևույթներ կամ առկա է ջրհեղեղի վտանգ,

- դաշտային պայմաններում աշխատանքներ իրականացնող անձնակազմը պետք է ունենա համապատասխան հանդերձանք, պիտույքներ, առաջին բժշկական օգնության անհատական պարագաներ, արտակարգ իրավիճակի վերաբերյալ ազդարարման գործիքակազմ,

- երկրաբանական երթուղիները իրականացվելու են առնվազն երկու աշխատակցի մասնակցությամբ,

- երկրաբանական երթուղիները կատարվելու են բացառապես օրվա լուսավոր ժամանակահատվածում,

- վտանգավոր տեխնիկական օբյեկտների (էլեկտրահաղորդման օղային գծեր, կաբելային գծեր, գազատարեր, երկաթգիծ և այլն) պահպանման գոտիներում աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում դրանք համաձայնեցվում են տեխնիկական օբյեկտները շահագործող կազմակերպությունների հետ:

Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնող մասնագետներին տրամադրվում են վտանգավոր գոտիների բաշխումը արտահայտող քարտեզներ,

- Էլեկտրական ցանցերի ենթակառուցվածքների տարածքում մեքենաների տեղաշարժը կատարվում է բացառապես այն հատվածներով, որտեղ ճանապարհի հարթության և օդային գծերի միջև առկա անհրաժեշտ տարածություն,

- բոլոր սարքավորումները շահագործվում են տեխնիկական փաստաթղթերին համապատասխան,

- արգելվում է մեխանիզմների և սարքավորումների շահագործում տեխնիկական անձնագրերով սահմանված բեռնվածությունների (ճնշում, հոսանքի ուժ, լարում և այլն) գերազանցման դեպքում,

- կտրող սայրերով գործիքների, սարքերի տեղափոխումը պետք է իրականացվի պաշտպանիչ ծածկաշապիկներով,

- աշխատաժամանակի առավելագույն տևողությունը չի գերազանցելու օրական 10 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ),

- աշխատանքները պետք է իրականացվեն ընդհատվող՝ 6-օրյա աշխատանքային շաբաթով,

- աշխատանքային շաբաթը ընդհատվելու է նաև տոնական ու հիշատակի հանգստյան օրերին:

Աշխատակիցները պետք է ապահովված լինեն հանգստի և սննդի ընդունման հարմարավետ տարածքով՝ աշխատանքները սպասարկվելու են բեռնարկղային տիպի ճաշարանն ու լվացարանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրաման
2. Շինարարական կլիմայաբանություն, ՀՀՇՆ II-7.01-2011
3. Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին: ՀՀ Կառավարության N 75 - Ն որոշում, 27.01.2011թ
4. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներ
5. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա
6. ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
7. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
8. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
9. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
10. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
11. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
12. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
13. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
14. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
15. “Деревья и кустарники Армении в природе и культуре”. Ж.А. Варданян, 1952
16. Животный мир Армянской ССР. Даль С.К, 1954
17. Թորամանյան Թ., Նյութեր Հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1948:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 27 մայիսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԼԵՎ- ՇԻՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Չարենցավան գյուղ Ֆանտան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 20/05/2024թ. 1652

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-067-0123-0020

Մակերեսի չափը (հա)՝ 16.3

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արոտավայր

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 27052024-07-0123, գաղտնաբառ՝ SBY9JFA47CS7

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ մինչև 20/05/2029թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՄԵՆ
ԽԱԼԱԹՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 27052024-07-0123, գաղտնաբառ՝ SBY9JFA47CS7

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ № 309_2024

Նմուշի նույնականացման համարն ըստ պատվիրատուի՝ **Ֆանտան հարավային**Նմուշի նույնականացման համարն ըստ ՓԼ-ի՝ **ՊՀ219**

h.h.	Փորձարկված ցուցանիշի անվանումը	Փորձարկման մեթոդը	Զափման միավորը	Փորձարկման արդյունքը	Ընդլայնված անորոշություն*
1.	Այլումին	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	43202	-
2.	Սիլիցիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	118299	-
3.	Ֆոսֆոր	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	929	-
4.	Ծծումբ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	1223	-
5.	Քլոր	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<50	-
6.	Կալիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	10849	-
7.	Կալցիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	11500	-
8.	Տիտան	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	4439	-
9.	Վանադիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<25	-
10.	Քրոմ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	150	-
11.	Մանգան	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	1045	-
12.	Երկաթ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	39774	-
13.	Նիկել	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	70	-
14.	Պղինձ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	33	-
15.	Ցինկ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	86	-
16.	Արսեն	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	13	-
17.	Սելեն	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5	-
18.	Ռուբիդիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	90	-
19.	Ստրոնցիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	235	-
20.	Իտրիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	27	-
21.	Ցիրկոնիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	179	-
22.	Նիոբիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	10	-
23.	Մոլիբդեն	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5	-
24.	Արծաթ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5	-
25.	Կադմիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5	-
26.	Անագ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5	-
27.	Ծարիր	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	21	-
28.	Վոլֆրամ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5	-
29.	Սնդիկ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5	-
30.	Կապար	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	17	-
31.	Բիսմութ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	14	-
32.	Թորիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5	-
33.	pH	ՀՍՏ ԻՍՕ 10390-2012	-	6.53	-
34.	Էլեկտրական հաղորդականություն	ԻՍՕ 11265:1994	մկՍ/սմ	155.5	-
35.	Խոնավություն	ԻՍՕ 11461:2001	%	21.5	-